2010թ. միացյալ ժամի ծրագիր

Գիտեմ ապրում է Փրկիչն իմ

«Ես գիտեմ, որ փրկիչս կենդանի է, և նա վերջը պիտի կանգնէ հողի վրա» (Հոբ ԺԹ.25):

Հրահանգներ միացյալ ժամի և հաղորդության ժողովին երեխաների ելույթի համար

Սիրելի Երեխաների Միությունների Նախագահություններ և Երաժշտության ղեկավարներ,

Այս տարի դուք հնարավորություն ունեք օգնելու երեխաներին զգալ և հասկանալ այն մեծ սերը, որ մեր Փրկիչը, Հիսուս Քրիստոսը տածում է նրանց հանդեպ: Սուրբ Հոգու վկայությամբ երեխաները կսովորեն, որ մեր Երկնային Հոր ծրագրում Հիսուս Քրիստոսի առանցքային դերի շնորհիվ իրենք կարող են հավատ ունենալ Նրա հանդեպ: Երեխաները նաև կսովորեն, որ իրենց հավատն էլ ավելի կաճի, եթե պահեն պատվիրանները, ծառայեն, կիսվեն ավետարանով, հետևեն Փրկչի օրինակին և պատրաստվեն Նրա Երկրորդ Գալստին:

Շնորհակալություն ձեր հավատարիմ ծառայության համար: Մենք աղոթում ենք ձեզ համար և վստահ ենք, որ կսիրեք երեխաներին, կուսուցանեք նրանց Հիսուս Քրիստոսի ավետարանը և կօգնեք նրանց ապրել դրա սկզբունքներով:

Երեխաների Միության Գերագույն Նախագահություն

Խորհուրդ. *Հրավիրեք երեխաներին սովորել սուրբ գրքերից, և դա կօգնի նրանց զարգացնել կյանքի տևողությամբ սեր Աստծո խոսքի հանդեպ: Ամեն շաբաթ ծրագրեք հրավիրել երեխաներին օգտագործելու և սովորելու սուրբ գրություններից: Որոշ երեխաներ հնարավոր է չունենան սուրբ գրություններ: Որոշ երեխաներ էլ հնարավոր է չկարողանան կարդալ: Այս ծրագրի ուսուցողական խաղերը և ուսումնական խորհուրդները, որոնք տրված են էջեր 7, 12 և 18, առաջարկում են մտքեր, թե ինչպես ուսուցանել օգտագործելով սուրբ գրությունները:*

Հրահանգներ միացյալ ժամի համար

Ավետարանի ուսուցանում

Օգտագործեք այս գրքույկը, երբ պատրաստվում եք ամեն շաբաթ միացյալ ժամին 15-րոպե տևողությամբ դաս մատուցել: Դուք կարող եք ամենշաբաթյա դասերը համալրել Եկեղեցու կողմից հաստատված այլ նյութերով, ինչպիսիք են՝ *Ընկերը* կամ *Լիահոնան:* Հետևյալ ուղեցույցները կօգնեն ձեզ պլանավորել և մատուցել դասերը:

Միրեք նրանց, ում ուսուցանում եք: Երեխաների հանդեպ ձեր սերն արտահայտեք, սովորելով նրանց անունները և ծանոթանալով նրանց հետաքրքրություններին, տաղանդներին և կարիքներին:

Հոգով ուսուցանեք Վարդապետությունը: Դասին պատրաստվելիս աղոթեք առաջնորդություն ստանալու համար և ձգտեք ամրապնդել ձեր վկայությունը այն սկզբունքների վերաբերյալ, որոնք ուսուցանելու եք: Դա կօգնի ձեզ Հոգով ուսուցանել:

Ջանասիրաբար սովորելու կոչ արեք: Այս գրքույկը նախատեսված է օգնելու ձեզ իմանալ ոչ միայն *այն,* ինչ պետք է ուսուցանեք, այլև *ինչպես* պետք է ուսուցանել և ջանասիրաբար սովորելու կոչ անել: Դուք ավելի արդյունավետորեն կուսուցանեք վարդապետությունը, եթե ամեն դասին կատարեք հետևյալ երեք կետերը.

1. **Ներկայացրեք վարդապետությունը:** Պարզորոշ ներկայացրեք վարդապետությունը, որ երեխաները պետք է սովորեն: Մտածեք, թե ինչպես կարող եք դա բառերով և պատկերավոր ներկայացնել: (Օրինակների համար տես դասերը մարտի առաջին շաբաթվա համար և հուլիսի առաջին շաբաթվա համար:)
2. **Օգնեք հասկանալ:** Հավաստիացեք, որ երեխաները խորապես հասկանում են վարդապետությունը նրանց սովորելու գործընթացում ներգրավելով ուսուցման տարբեր եղանակներ կիրառելով, ինչպիսիք են՝ երգեր երգելը, դերակատարումները և սուրբ գրությունները կարդալը:
3. **Օգնեք կիրառել:** Երեխաներին հնարավորություն տվեք տանը կիրառել վարդապետությունը: Մտածեք, թե ինչպես նրանք կարող են արտահայտել տվյալ վարդապետության հետ կապված իրենց զգացումները կամ նպատակներ դնել:

Այս գրքույկը տրամադրում է լիարժեք դասեր տարվա որոշ շաբաթների համար: Մյուս շաբաթների համար տրվում են մտքեր, բայց ոչ լիարժեք դասեր: Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Դուք կարող եք գաղափարներ քաղել այս գրքույկի այլ դասեր կարդալով: Եթե ամիսը հինգերորդ կիրակի ունի, այդ դասաժամը օգտագործեք նախորդ դասերը վերանայելու համար: Հոգին կարող է ուղեկցել ձեզ, եթե դուք դասերի համար վարժություններ ծրագրեք և պատրաստեք:

Ձեր դասերին պատրաստվելիս աշխատեք երաժշտության ղեկավարի հետ: Երգերը կօգնեն ամրապնդել ուսուցանվող վարդապետությունները: Երբեմն դուք կարող եք հրավիրել ուսուցիչներին և իրենց դասարանները, որ օգնեն ձեզ ավետարանի որոշ մասեր ուսուցանելիս:

Որոշ դասեր առաջարկում են հրավիրել հյուր խոսնակների մասնակցելու Երեխաների Խմբի դասին: Նախքան այդ անփանց հրավիրելը, դուք պետք է ձեր եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի համաձայնությունը ստանաք:

Դասերի հետ տրված են մի քանի ուսուցողական խորհուրդներ, որոնք կօգնեն բարելավել ձեր ուսուցման ունակությունը: Դասերը նաև ընդգրկում են նկարներ, որոնք կօգնեն ձեզ ընկալել, թե ինչպիսին է վարժությունը: Թեպետ ուսուցանելու ունակությունները կարևոր են, ձեր հոգևոր պատրաստվածությունը և վկայությունը կիրավիրեն Հոգին՝ հաստատելու այդ վարդապետությունները երեխաների սրտում:

Երգեցողության ժամ

Երեխաների Խմբում երաժշտությունը պետք է ստեղծի ակնածալի մթնոլորտ, ուսուցանի ավետարանը և օգնի երեխաներին զգալ Սուրբ Հոգու ազդեցությունը և երգից բխող ուրախությունը: Դուք պետք է միացյալ ժամի 20 րոպեն տրամադրեք երգ սովորեցնելուն: Այսպիսով դուք բավականին ժամանակ կունենաք նոր երգ սովորեցնելու և օգնել երեխաներին ուրախությամբ երգել:

Այս գրքույկում զետեղված է նոր երգ, որը երեխաները պետք է սովորեն այս տարի (տես էջեր 28-29): Այն նաև պարունակում է «Ինչպես օգտագործել երգը Երեխաների Խմբում» (տես էջեր 26-27) և լրացուցիչ մտքեր երեխաներին երգեր սովորեցնելու վերաբերյալ (տես էջեր 3, 5, 9 և 15):

Ուղեցույցներ Հաղորդության ժողովի ելույթի համար

Եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի ղեկավարության ներքո, հաղորդության ժողովին երեխաների ելույթն անց է կացվում տարվա չորրորդ եռամսյակին: Տարվա սկզբին, նախորոք ծրագրերը քննարկելու նպատակով, հանդիպեք եպիսկոպոսության կամ ճյուղի նախագահության խորհրդականի հետ, որը պատասխանատու է Երեխաների Միության համար: Երբ ծրագրերը վերջնական կլինեն, ստացեք նրա հավանությունը:

Ծրագրեք այնպես, որ երեխաները ներկայացնեն ծրագիրը միացյալ ժամի ամսական թեմաների հիման վրա: Տարվա ընթացքում գրի առեք երեխաների առանձին ելույթները և փորձառությունները հնարավորության դեպքում հաղորդության ելույթի ժամանակ օգտագործելու համար: Երբ ծրագրում եք, որ երեխաները կիսվեն այս տարվա թեմայի մասին իրենց սովորածով, մտածեք, թե ինչպես կարող են նրանք օգնել ներկաներին կենտրոնանալ ավետարանի այն վարդապետությունների վրա, որ իրենք են ուսուցանում:

Ելույթին նախապատրաստվելիս հիշեք հետևյալ ուղեցույցները.

- Փորձերը դասերից կամ ընտանիքներից անտեղի ժամանակ չպետք է խլեն:
- Հաղորդության ժողովին պատշաճ չէ օգտագործել ցուցադրական նյութեր, հատուկ հագուստներ և տեսանյութեր:

Հաղորդության ժողովի ելույթ

Պարտադիր չէ յուրաքանչյուր երեխայի հանձնարարել նախորոք գրված ելույթ ունենալ: Արդյունավետ ելույթները երեխաներին ներգրավում են տարբեր եղանակներով:

Խորհուրդ. *Դուք կարող եք լրացուցիչ ուսումնական աղբյուրներ գտնել, օրինակ՝ գունավորելու էջեր, պատմություններ և խաղեր* Ընկերից *և* Լիահոնա: *Օգտագործեք այդ աղբյուրները որպես հավելում ձեր դասերին:*

Այս գրքույկում օգտագործված աղբյուրներ

Այս գրքույկում օգտագործվել են հետևյալ նշաններն ու հապավումները.

ՀՄԵ *Հիմներ և մանկական երգեր*

TNGC *Teaching, No Greater Call*

Շատ դասեր ներառում են առաջարկություններ նկարները օգտագործելու վերաբերյալ: Դուք կարող եք նկարներ գտնել *Gospel Art Book*-ում, Ավետարանի նկարների ժողովածուում, Երեխաների Միության նկարների հավաքածուում և Եկեղեցու ամսագրերում և images.lds.org կայքում:

2010թ. Ծրագիր

Ընդհանուր ծրագիր

Մանկամսուր.*Միա՛ ձեր փոքրիկները,* Արևաշող. *Երեխաների Միություն 1;* ԸՃ 4–7: *Երեխաների Միություն 2;* Խիզախներ 8–11: *Երեխաների Միություն 6*

Հիմնական ծրագիր

Արևաշող. *Երեխաների Միություն 1;* ԸՃ 4–7: *Երեխաների Միություն 2;* Խիզախներ 8–11: *Երեխաների Միություն 4*

Հունվար

Երգ. «Ես գիտեմ, որ Իմ Փրկիչը սիրում է ինձ»
(այս ծրագրի էջեր 28–29 կամ *Ընկեր*, հոկտ. 2002, 46–47)

Մենք հավատում ենք Աստծուն՝ Հավերժական Հորը, և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին

«Մենք հավատում ենք Աստծուն՝ Հավերժական Հորը, և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, և Սուրբ Հոգուն» (Հավատո Հանգանակ 1.1):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Խորհուրդ. *Միացյալ ժամին պատրաստվելիս աղոթեք առաջնորդության համար և փնտրեք Հոգու ազդեցությունը: Երբ Հոգով եք պատրաստվում և ուսուցանում, Նա կհաստատի այն ամենի ճշմարտացիությունը, ինչ ուսուցանում եք:*

Խորհուրդ. *Ծրագրեք եղանակներ, որպեսզի* ներկայացնեք *վարդապետությունը երեխաներին և օգնեք նրանց* հասկանալ *և* կիրառել *այն: Մտածեք, թե ինչպես կարող եք երեխաներին հնարավորություն տալ.*

- *Քննարկել վարդապետությունը:*
- *Կարդալ տվյալ վարդապետությանը առնչվող սուրբ գրությունները:*
- *Պատկերացնել վարդապետությունը:*
- *Երգել տվյալ վարդապետությանը վերաբերող երգեր:*
- *Տվյալ վարդապետությանը առնչվող խաղ խաղացել:*

Շաբաթ 1. Աստված իմ հոգու Հայրն է:

Ներկայացրեք վարդապետությունը *(հասկանալով դասի նպատակը).* Երեխաներին ցույց տվեք մի քանի տարբեր ձեռնոցներ և նշեք, որ այդ ձեռնոցներից յուրաքանչյուրը տարբեր է, ինչպեսև մենք տարբեր տեսքեր ունենք: Բացատրեք, որ կարևոր չէ, թե որքան տարբեր ենք մենք, բոլորս էլ ունենք հոգի մեր մարմնում, և մեր հոգին մեզ կյանք է տալիս: Դա ներկայացնելու համար, ձեռնոցը հագեք և շարժեք ձեր մատերը: Բացատրեք, որ ձեռնոցը մեր մարմնի նման է, իսկ ձեռքը մեր հոգու: Խնդրեք երեխաներին լսել «Ո՞վ է իմ հոգու Հայրը» հարցի պատասխանը, երբ կարդում եք Մաղաքիա Բ.10-ի առաջին երկու նախադասությունները: Գրատախտակին գրեք «Աստված իմ հոգու հայրն է»: Խնդրեք երեխաներին ձեզ հետ միասին կարդալ այն: Բացատրեք, որ մենք բոլորս մի մեծ ընտանիքի՝ Աստծո ընտանիքի, մասն ենք:

Օգնեք հասկանալ *(երգ երգելով).* Ցուցադրեք մի ընտանիքի նկար և բացատրեք, որ երբ Երկնային Հայրը ուղարկեց մեզ երկիր, Նա ուղարկեց մեզ ապրելու ընտանիքներում: Խնդրեք երեխաներին մատերով ցույց տալ, թե քանի հոգուց է բաղկացած իրենց ընտանիքը: Երեխաներին ասեք, որ նրանք կերգեն մի երգ, որը ուսուցանում է իրենց երկնային ընտանիքի և երկրային ընտանիքի մասին: Խնդրեք մի երեխայի դուրս գալ սենյակից, և թող մյուս երեխաները թաքցնեն ընտանիքի նկարը: Ներս կանչեք երեխային և թող նա գտնի ընտանիքի նկարը, մինչ երեխաները երգում են «Աստծո զավակն եմ» երգը (*ՀՄԵ*, էջ 58): Երբ երեխան հեռու է նկարից, թող երեխաները նստած մնան իրենց տեղերում, իսկ որքան նա մոտենում է նկարին, թող երեխաները աստիճանաբար կանգնեն: Եթե ժամանակը թույլ է տալիս, նույնը կրկնեք մյուս երեխաների հետ ևս: Քննարկեք երգի խոսքերը և վկայեք ընտանիքի կարևորության մասին:

Օգնեք կիրառել *(հայելու մեջ նայելով).* Թող երեխաները հերթով նայեն հայելու մեջ: Ասացեք նրանց, որ ամեն անգամ հայելու մեջ նայելիս նրանք պետք է հիշեն, որ տեսնում են Աստծո զավակի:

Առարկայական դաս

«Առարկայական դասերը անընդմեջ ունի սկզբունքները կապում են ծանոթ ֆիզիկական առարկաների հետ» (TNGC, 164): Այս առարկայական դասը կօգնի երեխաներին հասկանալ, թե ինչ կապ ունի հոգու էությունը իրենց ֆիզիկական մարմնի հետ:

Շաբաթ 2. Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է:

Օգնեք հասկանալ *(սուրբ գրություններ կարդալով).* Տախտակից կախեք երեք նկար. Հովհաննեսը մկրտում է Հիսուսին, Հիսուսը հայտնվում է Նեփիացիներին և Առաջին տեսիլքը: Երեխաներին բաժանեք երեք խմբի, և յուրաքանչյուր խմբին տվեք հետևյալ սուրբ գրություններից մեկը. Մատթեոս Գ.16–17; 3 Նեփի 11.6–8; Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.17: Թող նրանք իրենց խմբով քննարկեն սուրբ գրությունը և ապա ներկայացնեն մյուս երեխաներին (1) իրադարձությունը, (2) ինչ ասաց Երկնային Հայրը, և (3) ինչպես նրանք կզգային իրենց, եթե այնտեղ լինեին: Մի երեխայի խնդրեք կարդալ Հովհաննես Ե.39: Բացատրեք, որ մենք կարող ենք ձեռք բերել վկայություն, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է, կարդալով սուրբ գրությունները և աղոթելով:

Շաբաթ 3 և 4. Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը սիրում են մեզ:

Օգնեք հասկանալ *(կռահելու խաղ խաղալով և երգելով).* Թող դաշնակահարը նվագի առաջին երկու նոտաները մի երգի, որն ուսուցանում է մեր հանդեպ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի սիրո մասին, և թող երեխաները կռահեն, թե որ երգն է: Ամեն անգամ մի նոտա ավելացրեք, մինչև երեխաները ճիշտ կկռահեն: Միասին երգեք երգը և ապա քննարկեք, թե ինչ է երգն ուսուցանում մեր հանդեպ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի սիրո մասին: Երեխաների մտքերը գրի առեք գրատախտակի վրա: Կրկնեք յուրաքանչյուր երգի համար: Կարող եք օգտագործել հետևյալ երգերը. «Շնորհակալություն քեզնից, թանկագին Հայր» (*ՀՄԵ,* էջ 61) և «Աստծո զավակն եմ» (*ՀՄԵ,* էջ 58):

Օգնեք կիրառել *(նկարելով).* Յուրաքանչյուր երեխայի տվեք թուղթ և խնդրեք նկարել մի բան, որը ցույց կտա ինչպես են Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը սիրում իրենց: Դուք կարող եք երեխաների ուշադրությունը հրավիրել վերը նշված վարժության ժամանակ գրատախտակին գրված մտքերին: Նկարները միացրեք կպչուն ժապավենով և ցուցադրեք տեղադրելով գլանակով արկղի մեջ (տես *TNGC,* 178–79) կամ Երբ երեխաներ դիտում են, թող դաշնակահարը նվագի վերը նշված երգերից մեկը:

Օգնեք հասկանալ և կիրառել *(ֆիզիկական վարժությանը մասնակցելով).* Տարբեր թղթերի վրա գրեք մի քանի օրինակներ, թե ինչպես է Երկնային Հայրն Իր սերն արտահայտում մեր հանդեպ, և ինչպես ենք մենք մեր սերն արտահայտում Նրա հանդեպ: Թղթի կտորները լցրեք մի արկղի մեջ և թող մի երեխա հրթով թուղթ հանի: Ամեն մեկը բարձրաձայն կարդացեք: Եթե այն ցույց է տալիս Երկնային Հոր սերը մեր հանդեպ, թող երեխաները մի ձեռքը վեր բարձրացնեն: Եթե այն ցույց է տալիս մեր սերը Երկնային Հոր հանդեպ, թող նրանք իրենց ձեռքերը դնեն սրտի վրա:

Օգնություն երաժշտության ղեկավարին

Որպեսզի օգնեք երեխաներին սովորել «Ես գիտեմ, որ Իմ Փրկիչը սիրում է ինձ» (այս ծրագրի էջեր 28–29), կատարեք հետևյալը.

Ցուցադրեք Փրկիչն օրհնում է Նեփիացի երեխաներին նկարը, և երեխաներին ձեր խոսքերով պատմեք 3 Նեփի 17.11–24-ում տրված պատմությունը: Երգի առաջին տողը երգեք երեխաների համար և կատարեք «գեղեցիկ վայր» խոսքերին համապատասխան շարժում (օրինակ, ձեր ձեռքերը լայն տարածեք): Խնդրեք երեխաներին երգել և այդ գործողությունը անել ձեզ հետ միասին: Խնդրեք երեխաներին մտածել, թե ինչ շարժում կարող են կատարել երգի յուրաքանչյուր տողի համար: Ապա միասին երգեք և կատարեք շարժումները:

Խորհուրդ. *Երեց Դալլին Հ. Օուքսն ասել է. «Մենք պետք է ավելի շատ օգուտ քաղենք մեր օրհներգերից, որոնք դարձնում են մեզ ներդաշնակ Տիրոջ Հոգուն, միավորում են մեզ և օգնում սովորեցնել և սովորել մեր վարդապետությունը» (Համաժողովի ելույթ, հոկտ. 1994, 13; կամ* Ensign, *նոյ. 1994, 12): Այս ծրագրի խորհուրդներն ու վարժություններն օգտագործեք, որպեսզի սովորեք, թե ինչպես կարող եք երաժշտությունն օգտագործել միացյալ ժամին:*



Երեխաները սիրում են տեսնել իրենց նկարները: Եթե պատրաստում եք գլանակով տուփ, կարող եք այն կրկին օգտագործել այլ դասերի համար: Այս վարժությունը կարող եք նաև կատարել նկարները միասին կպչուն ժապավենով փակցնելով և պատրաստելով հատակագիծ:

Փետրվար

Հիսուս Քրիստոսն Իմ Փրկիչն ու Քավիչն է

Երգ. «Նա ուղարկեց Իր Որդուն»
(*CS*, 34–35)

«Որովհետև Աստուած այնպես սիրեց աշխարհիքը, որ իր միածին Որդին տուավ. որ ամեն նորան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանքն ունենա» (Հովհաննես Գ.16):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Խորհուրդ. *Երեխաներն ավելի լավ կհասկանան վարդապետությունները, երբ միավորվեն ինչ-որ բանում, որ արդեն գիտեն: Ամեն անգամ դասը սկսելիս, վերանայեք անցյալ շաբաթ սովորած վարդապետությունը և այն համակցեք այդ դասին ուսուցանվող ճշմարտությունների հետ:*

Շաբաթ 1. Հիսուս Քրիստոսն իմ Փրկիչն ու Քավիչն է:

Օգնեք հասկանալ *(դիտելով նկարներ և կարդալով սուրբ գրություններ).* Սենյակում շարեք Վերջին Ընթրիքը, Քրիստոսը Գեթսեմանիում, Խաչում և Հարություն նկարները: Ցույց տալով նկարները ասեք երեխաներին, որ դրանք Փրկչի կյանքի վերջին շաբաթվա իրադարձություններն են: Ասեք երեխաներին, որ դուք պատրաստվում եք կարդալ սուրբ գրություն, որը վերաբերվում է նկարներից մեկին: Խնդրեք նրանց լուռ մտածել, թե որ նկարին է վերաբերվում տվյալ սուրբ գրությունը: Կարդացեք Ղուկաս ԻԲ.13–14, 19–20: Խնդրեք երեխաներին կանգնել և շրջվել դեմքով դեպի համապատասխան նկարը: Քննարկեք նկարում պատկերված իրադարձությունը: Նույնը կրկնեք մյուս նկարների համար (Գեթսեմանի. Ղուկաս ԻԲ.39–44; Խաչում. Ղուկաս ԻԳ.33–34, 46; Հարություն. Հովհաննես Ի.11–18): Երգեք մի երգ, օրինակ «He Sent His Son» (*CS*, 34–35) կամ «Գիտեմ հայրս ապրում է» (*ՀՄԵ* էջ 59): Վկայեք, որ Հիսուսը մահացավ մեզ համար, որպեսզի մենք կարողանանք կրկին ապրել Երկնային Հոր հետ:

Սովորել շարժումների օգնությամբ

Երեխաներն ավելի լավ կսովորեն և ավելի երկար կհիշեն, եթե ֆիզիկական շարժումներ կատարեն:

Շաբաթ 2 և 3. Հիսուս Քրիստոսի Քավությամբ ողջ մարդկությունը կարող է փրկվել:

Ներկայացրեք վարդապետությունը *(մտապահելով հավատո հանգանակ.* Գրատախտակին գրեք հավատո երրորդ հանգանակը և խնդրեք երեխաներին ձեզ հետ միասին մի քանի անգամ կրկնել այն: Համառոտ բացատրեք այն բառերը, որոնք երեխաները չեն հասկանում: (Օրինակ, Քավությունը այն է, ինչ Հիսուսը կատարեց, որպեսզի մեզ համար հնարավոր դառնա ապաշխարելը և Աստծո մոտ վերադառնալը: Ջնջեք մեկ կամ երկու բառ և կրկին միասին կրկնեք այն: Կրկնելով օգնեք երեխաներին մտապահել:

Օգնեք հասկանալ *(պատմություն դերակատարելով).* Պատմեք հետևյալ պատմությունը և խնդրեք երեխաներին կանգնել և դերերով կատարել այն: «Մի մարդ էր քայլում ճանապարհով *(քայլեք տեղում):* Նա ընկավ խորը փոսի մեջ *(նստեք):* Նա կրկին ու կրկին փորձեց, սակայն չկարողացավ դուրս գալ *(ցույց տվեք, որ փորձում եք դուրս գալ):* Նա օգնություն կանչեց *(ցածր ձայնով օգնություն կանչեք):* Մեկ ուրիշ մարդ էր անցնում այդ նույն ճանապարհով: Նա լսեց, որ մեկը օգնություն է կանչում *(կամաց կրկին օգնություն*

կանչեք): Նա աստիճան իջեցրեց փոսի մեջ: Մարդը աստիճանով բարձրացավ և դուրս եկավ փոսից *(ցույց տվեք, որ բարձրանում եք աստիճանով):* Մարդը փրկվեց»: Քննարկեք, թե ինչպես էր մարդը զգում իրեն, երբ փոսում էր, և երբ արդեն փրկվել էր: Ասեք երեխաներին, որ երբ մենք սխալ ենք գործում կամ մեղանչում ենք, դա նման է խորը փոսի մեջ ընկնելուն, որտեղից չենք կարող միայնակ դուրս գալ: Ցույց տվեք Հիսուսի նկարը և ասեք երեխաներին, որ ինչպես այն մարդը, որն օգնեց մյուսին դուրս գալ փոսից, Հիսուս Քրիստոսը կարող է օգնել և փրկել մեզ, և մենք կարող ենք վերադառնալ և կրկին ապրել մեր Երկնային Հոր հետ:

Օգնեք կիրառել *(սուրբ գրություններ կարդալով և քննարկելով).* Խնդրեք երեխաներին կարդալ Ալմա 7.11–12 և պարզել, թե ինչ է արել Հիսուսը մեզ համար: Խնդրեք մի քանի երեխաների ասել ինչ են իրենք գտել: Ասեք երեխաներին, որ Հիսուսը հասկանում է, թե երբ ենք մենք վիրավորված, վախեցած կամ հիվանդ: Նա կարող է օգնել մեզ հաղթահարել այդ երեք բաները: Գրատախտակի վրա գրեք հետևյալ նախադասությունները.

Ես երախտապարտ եմ Փրկչի համար, որովհետև _____:

Փրկիչը կօգնի ինձ _____:

Մի քանի երեխաների հրավիրեք կիսվել, թե ինչպես իրենք կավարտեին այդ նախադասությունները, կամ թող բոլոր երեխաները կիսվեն իրենց պատասխաններով իրենց կողքին նստած անձնավորության հետ:

Օգնեք հասկանալ *(վերանայելով սուրբ գրությունների պատմությունները).* Ասացեք երեխաներին, որ սուրբ գրություններում շատ պատմություններ կան մարդկանց մասին, ովքեր օրհնվել են Քավության շնորհիվ: Պատմեք այդ պատմություններից մի քանիսը: Նման պատմությունների կերպարներից են Ալմա կրտսերը (տես Ալմա 36.5–27), Պողոսը (տես Գործք Ը.1–3; Թ.1–20), և Ենովսը (տես Ենովս 1.1–8): Պատմությունը պատմելուց հետո, երեխաների հետ կրկնեք այն: Մի երեխայի նետեք մի ճմրթված թուղթ և խնդրեք նրան ասել այդ պատմությունից մի բան: Թող երեխան թուղթը ետ գցի ձեզ: Շարունակեք մինչև երեխաները կնշեն տվյալ պատմության կարևոր մանրամասների մեծ մասը: Կիսվեք Քավության վերաբերյալ ձեր վկայությամբ:

Խորհուրդ. *Երեխաները սովորում են շարժումների և խաղի միջոցով: Պատմություն պատմելիս նրանց ներգրավեք, խնդրելով կատարել պարզ շարժումներ և գործողություններ: Վարժությունից հետո դուք կարող եք օգնել նրանց պատրաստվել սովորելու հաջորդ պահին, ակնածանքով ավարտելով վարժությունը կամ խաղը: Օրինակ, թող երեխաները դանդաղ երգեն երգի մի քանի տող կամ պահելով ձեր ձեռքերը բացված հրավիրեք երեխաներին երգելիս նայեն ձեզ: Որքան շատ եք մոտեցնում ձեր ձեռքերը միմյանց, այն քան մեղմ են նրանք երգում: Շնորհակալություն ասեք նրանց ակնածանքի համար:*

Շաբաթ 4. Հիսուս Քրիստոսը հարություն առավ, և ես նույնպես հարություն կառնեմ:

Օգնեք հասկանալ *(նկարներ նայելով և գուշակելու խաղ խաղալով).* Երեխաներին խմբերի բաժանեք և յուրաքանչյուր խմբին տվեք Հարության վերաբերյալ որևէ իրադարձության մասին նկար (օրինակ, դուք կարող եք օգտագործել Խաչման, Քրիստոսի թաղման, դատարկ գերեզմանի, Մարիամի և հարություն առած Տիրոջ, և Աշակերտներին Իր վերքերը ցույց տվող Հիսուսի նկարները): Նրանց զգուշացրեք, որ թույլ չտան մյուս խմբերին տեսնել իրենց նկարները: Թող յուրաքանչյուր խումբը մի քանի հուշումներ ասի, որով կօգնի մյուս երեխաներին կռահել, թե ինչ է պատկերված իրենց նկարում: Երբ նրանք ճիշտ կռահեն, նկարը ցույց տվեք մյուս խմբերին: Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսի հարության շնորհիվ մենք բոլորս հարություն կառնենք:

Երեխաները սիրում են մասնակցել սովորելու գործընթացին:

Ձեր միացյալ ժամը ծրագրելիս, մտածեք, թե ինչպես կարող եք ավելի շատ երեխաներ ներգրավել սովորելու վարժություններում: Օրինակ, այս վարժությունը ներառում է ոչ թե մեկ կամ երկու անհատ, այլ երեխաների մի փոքր խումբ:

Օգնություն երաժշտության ղեկավարին

Որպեսզի օգնեք երեխաներին սովորել «He Sent His Son» երգը (*CS*, 34–35), կատարեք հետևյալը.

- Երգելիս թող երեխաները իրենց մատերի վրա հաշվեն, թե քանի անգամ են երգում «Նա ուղարկեց Իր Որդուն» խոսքերը, կամ խնդրեք նրանց կանգնել, երբ երգում են հարցերը, և նստել, երբ երգում են պատասխանները:
- Երեխաներին երկու խմբի բաժանեք: Թող մի խումբը երգի հարցերը, իսկ մյուս խումբը պատասխանի երգելով պատասխանները:

Մարտ

Աստված խոսում է Մարգարեների միջոցով

Երգեք «Հետևիր մարգարեին»:
(*CS*, 110–11)

«Նա խոսեց հավիտենից իր մարգարեների բերանովը» (Ղուկաս Ա.70):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Խորհուրդ. *Երեխաները կզգան Հոգին կիավելով ավետարանի սկզբունքների իրենց հասկացողությամբ: Նրանք կարող են իրենց խոսքերով, նկարներով և երգերով կիավել, թե ինչ են սովորել:*

Շաբաթ 1. Մարգարեները կանչված են Աստծո կողմից:

Ներկայացրեք վարդապետությունը *(ճիշտ կարգով դասավորելով բառերը).* Գրեք հետևյալ բառերից յուրաքանչյուրը թղթի առանձին կտորների վրա. Մարգարեները, են կանչված, կողմից, Աստծո: Թղթի կտորները տվեք հինգ երեխաների: Այդ երեխաներին կանգնեցրեք Երեխաների Խմբի առջև, այնպես որ բառերը խառը լինեն: Մյուս երեխաներին խնդրեք ճիշտ ձևով դասավորել բառերը: Միասին կրկնեք նախադասությունը:

Օգնեք հասկանալ *(սուրբ գրություններ կարդալով).* Հուշումներ պատրաստեք այն մասին, թե ինչպես Մովսեսը, Լեքին և Ջոզեֆ Սմիթը կանչվեցին Աստծո կողմից: Օրինակ, Մովսեսի մասին հուշումները կարող են լինել. «Ես կանչվեցի Աստծո կողմից, երբ Նա խոսեց ինձ հետ այրվող մորենու միջից», «Աստված կանչեց ինձ գրելու Աստվածաշնչի առաջին հինգ գրքերը», և «Աստված կանչեց ինձ, որպեսզի Եգիպտոսից դուրս հանեմ Իր ժողովրդին»: Ընտրեք երեք երեխաների, որպեսզի ներկայացնեն այդ մարգարեներին, և խնդրեք նրանց հուշումներ տալ Երեխաների Խմբին: Երեխաներին խնդրեք ձեռք բարձրացնել, եթե գիտեն, ով է այդ մարգարեն: Խնդրեք երեխաներին միասին պատասխանել: Յուրաքանչյուր մարգարեին գտնելուց հետո կարդացեք տվյալ մարգարեի մասին սուրբ գրությունը (Մովսես. Ելից Գ.4–5; Լեքի. 1 Նեփի 1.5–6; Ջեզեֆ Սմիթ. Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.16–17): Նշեք, որ Մովսեսը կանչվեց Աստծո կողմից, Լեքին կանչվեց Աստծո կողմից, և Ջոզեֆ Սմիթը կանչվեց Աստծո կողմից: Ասեք երեխաներին, որ բոլոր մարգարեները կանչվել են Աստծո կողմից:

Օգնեք կիրառել *(քննարկելով և մտքերը դերերով կատարելով).* Երեխաներին հարցրեք. «Ո՞վ է այսօր մեր մարգարեն»: Ցույց տվեք Եկեղեցու ներկայիս Նախագահի նկարը: Բացատրեք, որ նա կանչվել է Աստծո կողմից: Խնդրեք երեխաներին դասարանային խմբերով քննարկել, թե ինչպես իրենք կարող են հետևել ներկայիս մարգարեին: Յուրաքանչյուր խմբից մի երեխայի կանչեք դասարանի առաջ և թող ցուցադրի այն, ինչի մասին քննարկել են իրենց խմբում: Թող մյուս երեխաները կռահեն, թե ինչ է ցուցադրվող այդ գործողությունը նշանակում: Խնդրեք այդ երեխային կիսվել, թե այդ ձևով մարգարեին հետևելը ինչպես կօրհնի իր կյանքը:

Շաբաթ 2. Մարգարեները վկայում են Հիսուս Քրիստոսի մասին:

Օգնեք հասկանալ *(նկարներ նայելով և սուրբ գրություններ կարդալով).* Նախքան միացյալ ժամի սկսվելը գրատախտակի վրա տեղադրեք Հիսուս Քրիստոսի նկարը և նկարը ծածկեք հետևյալ մարգարեների նկարներով. Եսայիա, Հովհաննես Մկրտիչ, Նեփի և Ջոզեֆ Սմիթ:

Ներկայացրեք վարդապետությունները

Երբ դուք վարժություն եք կատարում, պարզորոշ ներկայացրեք ուսուցանվող վարդապետությունը: Դա օգնում է երեխաներին ավելի լավ հասկանալ և կիրառել այն:

Սեղմեք այստեղ բառաշերտերի համար:

Յուրաքանչյուր դասարանին հանձնարարեք հետևյալ սուրբ գրություններից մեկը. Եսայիա Թ.6; Մարկոս Ա.6–8; 2 Նեփի 25.26; Վարդապետություն և Ուխտեր 76.20–24: Խնդրեք երեխաներին իրենց դասարանով կարդալ սուրբ գրությունը և պարզել, որ մարգարեն է վկայում և ինչ է վկայում Հիսուս Քրիստոսի մասին: Խնդրեք մի դասարանին ցույց տալ այն մարգարեի նկարը, որի մասին կարդացել են, և Երեխաների Խմբի հետ կիսվեն իրենց սովորածով: Գրատախտակի վրայից հանեք մարգարեի նկարը: Նույնը կրկնեք մյուս երեք մարգարեների համար: Ցույց տվեք Քրիստոսի նկարը և ասեք երեխաներին, որ բոլոր մարգարեները վկայում են Հիսուս Քրիստոսի մասին:

Խորհուրդ. *Երբ երեխաներին խնդրեք կարդալ իրենց սուրբ գրություններից, դա կամրապնդի սուրբ գրքերի կարևորությունը և կհրավիրի Հոգին: Հնարավորության դեպքում խնդրեք երեխաներին ձեզ հետ գտնել սուրբ գրության հատվածներից մեկը: Դուք կարող եք օգնել երեխաներին գտնել հատվածը տալով էջի համարը և ձեր սուրբ գրության մեջ ցույց տալով հատվածի տեղը: Միասին կարող եք բարձրաձայն կարդալ այդ հատվածը:*

Շաբաթ 3. Մարգարեին հետևելը ապահովություն է բերում:

Օգնեք հասկանալ *(վարժություն կատարելով).* Ցույց տվեք Մովսեսի նկարը, և բացատրեք, որ Մովսեսը մարգարե էր, որն իր ժողովրդին առաջնորդեց դեպի ապահովություն: Բացատրեք, որ Իսրայելցիները գերության մեջ էին Եգիպտոսի թագավոր Փարավոնի մոտ, և Տերը պատվիրեց, որ Մովսեսը դուրս հանի նրանց Եգիպտոսից (տես Ելից Գ.10): Պատմեք Ելից ԺԴ-ի պատմությունը, և հրավիրեք երեխաներին ձեզ հետ միասին դերակատարել այն: Օրինակ. «Մարդիկ հետևեցին Մովսեսին անապատով *(քայլեք տեղում:)* Նրանք մոտեցան ծովին *(ձեռքերով ալիքներ արեք):* Մարդիկ ետ նայեցին *(ետ նայեք)* և տեսան Փարավոնն իր բանակով գալիս է իրենց ետևից *(ձեռքերը ուսերին խփելով վազող ձիերի ձայն հանեք):* Նրանք վախեցան *(ձևացրեք, որ վախենում եք)*»: Կարդացեք Ելից ԺԴ.13, և շարունակեք պատմությունը: «Տերն ասաց Մովսեսին, որ իր գավազանը բարձրացնի *(ձեռքով ցույց տվեք, որ բարձրացնում եք գավազանը),* և ծովը բաժանվեց *(ձեռքերը կողքի տարածեք):* Մարդիկ հետևեցին Մովսեսին չոր հողի վրայով քայլելով և ապահով անցնելով ծովի մյուս ափը *(տեղում քայլեք):* Երբ Փարավոնի բանակը փորձեց գնալ նրանց ետևից, Տերը պատվիրեց, որ Մովսեսը պարզի իր ձեռքը, և ջրերը կրկին միացան *(միացրեք ձեռքերը):* Փարավոնի բանակը խեղդվեց ծովում: Մարդիկ ապահով էին, որովհետև նրանք հետևեցին մարգարեին»:

Ի՞նչ պետք է *անեն* երեխաները սովորելու համար:

Վարժություններին պատրաստվելիս այս հարցը տվեք, որը կօգնի երեխաներին մասնակցելով սովորել: Օրինակ, այս նկարում երեխաները դերերով կատարում են պատմությունը, որտեղ Մովսեսը բաժանում է Կարմիր ծովը:

Շաբաթ 4. Աստված խոսում է մարգարեների միջոցով:

Կարող եք վերանայել վարդապետությունները, որոնք երեխաները սովորել են այս ամիս միացյալ ժամին: Օրինակ, դուք կարող եք.

- Կրկնել կամ ավելի զարգացնել նախորդ միացյալ ժամերի որոշ վարժություններ:
- Երեխաներին ցույց տալ այսօրվա մարգարեի նկարը և ասել. «Ձեռք բարձրացրեք, եթե գիտեք ում նկարն է սա»: Խնդրեք երեխաներին իրենց կողքի նստածի ականջին շշնջալ նրա անունը: Խնդրեք մի քանի երեխաների կիսվել մարգարեի մասին իրենց զգացողությամբ:
- Երգեք. «Հետևիր մարգարեին» երգի կրկներգը (*CS,* 110–11) և թող երեխաները ցույց տան, թե ինչ պետք է կատարեն մարգարեին հետևելով:

Խորհուրդ. *Այս ամիս դուք օգտագործել եք հետևյալ ուսումնական եղանակները. դասավորելով բառերը, կարդալով սուրբ գրությունները, քննարկելով և դերերով կատարելով մտքերը, նկարներ նայելով, վարժություններին մասնակցելով և նախորդ վարժությունները կրկնելով: Մտածեք, թե ինչպես կարող եք այս եղանակներն օգտագործել մյուս դասերի համար:*

Ապրիլ

Երգ. «The Church of Jesus Christ» (*CS*, 77)

Ջոզեֆ Սմիթի միջոցով Հիսուս Քրիստոսը վերականգնեց ավետարանի լրիվությունը

«Մենք հավատում ենք նույն կազմակերպությանը, որը գոյություն ուներ Նախնական Եկեղեցում» (Հավատո հանգանակ 1.6):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որ սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Խորհուրդ. *Խմբերի բաժանելը հնարավորություն է տալիս, որ ավելի շատ երեխաներ մասնակցեն: Հաշվի առեք ձեր Երեխաների Խմբի չափը և մտածեք, քանի խմբի պետք է բաժանել երեխաներին, որպեսզի բոլորը ներգրավվեն վարժության մեջ (տես շաբաթ 1):*

Շաբաթ 1. Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին:

Ներկայացրեք վարդապետությունը *(կարդալով սուրբ գրությունները).* Երեխաներին պատմեք, որ Հիսուս Քրիստոսը հաստատեց Իր Եկեղեցին, երբ ապրում էր երկրի վրա: Այսօր մենք այդ եկեղեցին անվանում ենք «Նախնական Եկեղեցի»: Բացատրեք, որ Հիսուսի մահից ոչ շատ անց, Նրա ավետարանը վերցվեց երկրի վրայից, և երկար տարիներ անց Նա վերականգնեց ավետարանը Ջոզեֆ Սմիթի միջոցով: Պատրաստեք չորս բառաշերտիկներ, յուրաքանչյուրի վրա գրված հետևյալ նախադասություններից մեկը.

1. Ջոզեֆ Սմիթը կարդում է Աստվածաշնչում. «Եթե մեկը ձեզանից _____ _____ _____, թող խնդրէ Աստծուց»: (Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.11)
2. Ջոզեֆ Սմիթը գնաց _____ _____: (Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.14)
3. Ջոզեֆն իր գլխավերևում տեսավ _____: (Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.16)
4. Երկնային Հայրը ցույց տվեց Հիսուս Քրիստոսին և ասաց. «Սա է Իմ _____ _____»: (Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.17)

Երեխաներին բաժանեք չորս խմբի, և յուրաքանչյուր խմբին տվեք մի բառաշերտիկ: Խնդրեք նրանց կարդալ սուրբ գրությունը բաց թողնված բառերը գտնելու համար: Թող նրանք պատասխանը թղթի վրա լրացնելու փոխարեն շշնջան միմյանց ականջին: Թող երեխաները իրենց բառաշերտը փոխանցեն մյուս խմբին, և կրկնեք դա մինչև բոլոր խմբերը կգտնեն պատասխանները: (Պատասխան. 1: իմաստության պակաս, 2: պուրակ, աղոթք, 3: լույս, 4: Սիրելի Որդին)

Օգնեք հասկանալ. Կարող եք օգտագործել վարժություններ, ցուցադրական նյութեր և խաղատիկնիկներ *Սիա ձեր փոքրիկները* մանկական ձեռնարկից, որպեսզի օգնեք երեխաներին հասկանալ, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին (տես էջեր 88–91):

Շաբաթ 2. Ջոզեֆ Սմիթը Աստծո զորությամբ թարգմանեց Մորմոնի Գիրքը:

Օգնեք հասկանալ *(կարդալով և քննարկելով սուրբ գրությունը).* Գրատախտակի վրա գրեք *Աստծո զորությամբ* օգտագործելով կոդ (օրինակ, դուք կարող եք յուրաքանչյուր տառը փոխարինել ինչ-որ նշանով): Հարցրեք, թե արդյոք որևէ մեկը կարող է կարդալ այդ ուղերձը: Գրատախտակի վրա գրեք բանալին, որը ցույց է տալիս, թե որ տառերին ինչ նշաններ են փոխարինում, և թող երեխաները իրենց խմբերով աշխատեն, որպեսզի վերծանեն ուղերձը: (Հիշեցրեք երեխաներին, որպեսզի բարձրաձայն չասեն պատասխանը:) Միասին կարդացեք այդ արտահայտությունը: Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 1.29: Բացատրեք, որ Ջոզեֆ Սմիթը առանց Տիրոջ օգնության չկարողացավ կարդալ ոսկե թիթեղների գրվածքները: Խնդրեք երեխաներին կիսվել իրենց գիտելիքով, թե ինչպես Ջոզեֆ Սմիթը կարողացավ թարգմանել Մորմոնի Գիրքը: Մի քանի երեխաների խնդրեք կիսվել, թե ինչպես են զգում Մորմոնի Գրքի վերաբերյալ:



Ներկայացրեք Վարդապետությունները

Պարզորոշ ներկայացրեք ուսուցանվող վարդապետությունը: Դա օգնում է երեխաներին ավելի լավ հասկանալ և կիրառել այն: Մտածեք, ինչպես կարող եք երեխաներին հասկացնել վարդապետության խոսքերը և մտապահել դրանք:

Շաբաթ 3 և 4. Ջոզեֆ Սմիթի միջոցով Հիսուս Քրիստոսը վերականգնեց ավետարանը:

Ներկայացրեք վարդապետությունը և օգնեք հասկանալ *(գլուխկոտրուկ հավաքելով).* Հիշեցրեք երեխաներին, որ Հիսուսի մահից ոչ շատ ուշ Նրա ավետարանը վերցվեց երկրից, և Նա հետագայում Ջոզեֆ Սմիթի միջոցով վերականգնեց ավետարանը: Բացատրեք, որ վերականգնել նշանակում է կրկին մեկտեղ հավաքել: Եկեղեցու մի պարզ նկար նկարեք ինչպես ցույց է տրված (տես Եփեսացիս Բ.20; Դ.11–13): Բացատրեք, որ երբ Քրիստոսը երկրի վրա էր, հաստատեց Իր Եկեղեցին: Նկարը բաժանեք կտորների, երբ ուսուցանում եք Ուրացության մասին: Թող երեխաները հավաքեն (վերականգնեն) նկարը, լսելով դաշնակահարի կատարմամբ «Ոսկե թիթեղները» օրհներգը (*ՀՄԵ,* էջ 65): Միասին երգեք երրորդ տունը:



Սեղմեք այստեղ նկարի համար:

Օգնեք հասկանալ *(լսելով հյուր խոսնակների).* Հրավիրեք ծխի մի քանի անդամների գալ Երեխաների Խումբ և ներկայացնել Վերականգնմանը մասնակցած մարդկանց (ինչպիսիք են Ջոզեֆ Սմիթը [տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.8–20], Մորոնի հրեշտակը [տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.29–35, 42–49], Երեք Վկաները [տես «Երեք Վկաների Վկայությունը»], կամ Հովհաննես Մկրտիչը [տես ՎևՈւ 13]): Նրանք կարող են սովորական հագուստ հագնել: Երեխաներին բաժանեք խմբերի: Հյուրերին խնդրեք հայտնել ում են իրենք ներկայացնում և թող երեխաները պատմեն, թե ինչ գիտեն նրանց մասին: Այցելուներին խնդրեք կիսվել իրենց վկայություններով այն մարդկանց մասին, ում իրենք ներկայացնում են:

Կարող եք այս վարժության նման նկարել: Եթե ձեր Երեխաների Խումբը մեծ է, մտածեք ինչպես կարող են երեխաները փոքր խմբերով կատարել այս վարժությունը:



Խորհուրդ. *Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը չպետք է դրամատիկ ձևով ներկայացվեն:*

Օգնություն երաժշտության ղեկավարին

Որպեսզի օգնեք երեխաներին սովորել «The Church of Jesus Christ» (*CS,* 77), կատարեք հետևյալը.

- Խնդրեք երեխաներին կանգնել, եթե ընտանիքի անդամ են: Կրկին խնդրեք կանգնել, եթե պատկանում են այլ խմբի, օրինակ, թիմի, ակումբի կամ եկեղեցու: Թող երեխաները բացատրեն, թե ինչ է նշանակում *պատկանել* (որ դուք ինչ-որ բանի կարևոր մասն եք): Երգը ներկայացրեք ցույց տալով Հիսուս Քրիստոսի նկարը և խնդրելով երեխաներին միասին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 115.4:

- Երգի յուրաքանչյուր տողը ներկայացրեք, երեխաներին խնդրելով լսել հարցի պատասխանը, մինչ նրանց համար երգում եք տվյալ տողը: (Օրինակ. Ինչի՞ն եմ ես պատկանում: Ի՞նչ երկու բան եմ ես անում: Ինչպե՞ս եմ ես հետևում Նրան: Ապա խնդրեք երեխաներին երգել այդ տողը միասին: Շարունակեք մինչև երեխաները կսովորեն ամբողջ երգը:
- Երեխաների Խումբը բաժանեք երկու խմբի և խնդրեք մի խմբին երգել յուրաքանչյուր տողի միայն առաջին երկու բառերը (*Ես պատկանում եմ, ես գիտեմ,* և այլն), և խնդրեք մյուս խմբին շարունակել այդ տողը: Փոխեք խմբերը և կրկնեք:

Խորհուրդ. *Երեխաների Խմբի երգերը ներգրավեք ձեր ուսուցման մեջ: Սա կօգնի երեխաներին հիշել իրենց սովորածը: «Մենք կարող ենք երգի միջոցով զգալ և շատ արագ սովորել . . . որոշ հոգևոր բաներ, որոնք այլապես մենք շատ դանդաղ կսովորեինք» (Բոյդ Ք. Փաքեր,* TNGC, *46):*

Մայիս

Ավետարանի սկզբունքներն ու արարողությունները ինձ մոտեցնում են Հիսուս Քրիստոսին

Ձեր ընտրությամբ երգեք *Երեխաների Խմբի* երգերից մեկը:

«Մենք հավատում ենք, որ Ավետարանի առաջնային սկզբունքներն ու արարողություններն են. առաջին՝ Հավատք առ Տեր Հիսուս Քրիստոս. երկրորդ՝ Ապաշխարություն. երրորդ՝ ընկղմամբ Մկրտություն մեղքերի թողության համար. չորրորդ՝ Ձեռնադրում Սուրբ Հոգու պարգևի համար» (Հավատո Հանգանակ 1.4):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Խորհուրդ. *Երբ փոքր խմբերում խնդրում եք երեխաներին կիսվել իրենց մտքերով, ավելի շատ երեխաներ են մասնակցելու հնարավորություն ունենում: Միացյալ ժամին երեխաներն արդեն խմբերով են նստում դասարանում: Այդ խմբերը հարմար են փոքր խմբերով վարժությունների համար: Դասարանի ուսուցիչները կարող են օգնել, որպեսզի երեխաները մասնակցեն և օգնեն պահպանել ակնածանքը:*

Շաբաթ 1. Հիսուս Քրիստոսի հանդեպ իմ հավատն ամրապնդվում է, երբ ես հնազանդ եմ:

Ներկայացրեք վարդապետությունը *(հավատո հանգանակ սովորելով).* Գրատախտակի վրա կախեք Հիսուս Քրիստոսի նկարը: Դեպի նկարը տանող աստիճան նկարեք չորս սանդղակով: Միասին ասեք հավատո չորրորդ հանգանակը, և խնդրեք երեխաներին ասել ավետարանի առաջին սկզբունքները և արարողությունները, իսկ դուք գրեք դրանք աստիճանի համապատասխան սանդղակների մոտ: Մատների վրա հաշվեք յուրաքանչյուր սկզբունքն ու արարողությունը: Մտածեք, ինչպես կարող եք օգնել երեխաներին մտապահել հավատո չորրորդ հանգանակը:

Սուրբ Հոգի

Մկրտություն

Ապաշխարություն

Հավատ Հիսուս Քրիստոսի հանդեպ

Օգնեք հասկանալ *(երգ երգելով).* Երգեք «Faith» (*CS*, 96–97): Երկրորդ տան յուրաքանչյուր նախադասության համար բառաշերտ պատրաստեք: Բաժանեք երեխաներին չորս խմբի և յուրաքանչյուր խմբին տվեք մի բառաշերտ: Թող յուրաքանչյուր խումբը կանգնի և այդ երգի համապատասխան մասում երգի իրենց տողը: Թող խմբերը փոխանակեն բառաշերտերը, և կրկնեն մինչև յուրաքանչյուր խումբը կկատարի բոլոր տողերը: Խնդրեք երեխաներին դերերով ցույց տալ ինչպես կարող են հնազանդ լինել: (Սա կարելի է կատարել իրենց խմբերում կամ ամբողջ Երեխաների Խմբում: Երեխաների հետ կիսվեք փորձառությամբ, որը ամրապնդել է Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր հավատը:

Շաբաթ 2. Ես կարող եմ ապաշխարել:

Օգնեք հասկանալ և կիրառել *(քննարկելով իրական դեպքեր).* Բացատրեք, որ երբ մենք ինչ-որ սխալ ենք գործում, Հիսուս Քրիստոսի շնորհիվ, կարող ենք ապաշխարել, ինչը նշանակում է դադարում ենք մեղք գործել և դառնում ենք դեպի Աստված: Բացատրեք, որ ապաշխարությունն ընդգրկում է զղջալ, ներողություն խնդրել, սխալը շտկել և սխալը չկրկնել: Հակիրճ քննարկեք երեք քայլերը, նշելով, թե ինչպես Փրկիչը կարող է օգնել մեզ: Բաժանեք երեխաներին խմբերի և յուրաքանչյուր խմբին տվեք ինչ-որ դեպքի ուսումնասիրություն: Խնդրեք նրանց կարդալ տվյալ դեպքի մասին և քննարկել, թե ինչ կարող են անել ապաշխարելու համար: Օրինակ, ինչ-որ մեկը զայրանում է և հարվածում եղբորը կամ քրոջը: Ի՞նչ պետք է նա անի: Երախտապարտ եղեք, որ Հիսուս Քրիստոսի շնորհիվ մենք կարող ենք ապաշխարել:

Օգտագործեք գրատախտակը

Գրատախտակը կարող է արդյունավետ ուսուցման գործիք լինել: Պարզ գծերով նկարներ օգտագործեք, որը կօգնի ուսուցանել ավետարանի սկզբունքները:

Շաբաթ 4. Մկրտվելիս ես ուխտ եմ կապում Աստծո հետ:

Ներկայացրեք վարդապետությունը *(խոստումների մասին սովորելով).* Որպեսզի ցույց տաք ինչ է խոստումը, խնդրեք երկու երեխաների գալ դասարանի առաջ: Թող երեխաներից մեկն ասի. «Ես խոստանում եմ _____ (քեզ տալ կարդալու իմ գիրքը), եթե դու խոստանում ես _____ (վերադարձնել այն)»: Թող մյուս երեխան համաձայնվի և սեղմի առաջին երեխայի ձեռքը: Բացատրեք, որ ուխտը երկկողմանի խոստում է մեր և Աստծո միջև: Գրատախտակի մի կողմում գրեք «Աստված խոստանում է», իսկ մյուս կողմում՝ «Մենք խոստանում ենք»: Բացատրեք, որ երբ մկրտվում ենք, մենք խոստումներ ենք տալիս Աստծուն, և Նա էլ խոստումներ է տալիս մեզ:

Օգնեք հասկանալ *(երգ երգելով).* Նախորոք պատրաստեք թղթի կտորներ հետևյալ խոստումներով և երգերով. Մեզ վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը («The Church of Jesus Christ» [*CS,* 77]); Միշտ հիշել Նրան («To Think about Jesus» [*CS,* 71]); Պահել պատվիրանները («Keep the Commandments» [*CS,* 146–47]); Նրա Հոգին մեզ հետ ունենալ («The Holy Ghost» [*CS,* 105]); Վերադառնալ ապրելու Նրա հետ («Աստծո զավակն եմ», տուն 3 [*ՀՄԵ,* էջ 58) Լցրեք թղթի կտորները մի տուփի մեջ: Թող երեխաները մի հատ թուղթ հանեն և կարդան խոստումը: Երեխաներին հարցրեք. «Ո՞վ է այդ խոստումը տալիս՝ Աստված, թե՞ մենք»: Այդ խոստումը գրեք գրատախտակին ճիշտ վերնագրի տակ: Խնդրեք երեխաներին երգ երգել և տուփը փոխանցել մինչև երգը կավարտվի: Երբ երգը ավարտվում է, այն երեխային, որի ձեռքին է հայտնվել տուփը, խնդրեք մեկ այլ թուղթ հանի տուփից: Կրկնեք յուրաքանչյուր երգի հետ միասին: Վերանայեք խոստումները և վկայեք մկրտության ուխտի կարևորության մասին:



Երեխաները որպես ցուցադրման միջոց

Երեխաներին որպես ցուցադրման միջոց օգտագործելը կգրավի նրանց ուշադրությունը և նրանց սովորելուն կպատրաստի: Օրինակ, այս միացյալ ժամի սկզբում երեխաները ցույց են տալիս, թե ինչ է նշանակում խոստումը:

Շաբաթ 4. Երբ հաստատվում եմ, ես ստանում եմ Սուրբ Հոգու պարգևը:

Ներկայացրեք վարդապետությունը *(նկար նայելով և երգ երգելով).* Ցույց տվեք երեխայի նկար, որը հաստատվում է, հարցրեք երեխաներին, ինչ է տեղի ունենում: Հարցրեք. «Ի՞նչ է Սուրբ Հոգու պարգևը»: Նշեք, որ Սուրբ Հոգու պարգևը Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունն ունենալու իրավունք է: Երգեք «Սուրբ Հոգին» (*CS,* 105):

Օգնեք հասկանալ *(հարցեր տալով).* Երեխաների Խումբ հրավիրեք Մելքիսեդեկյան Քահանայության կրողի: Մի քանի երեխաների հարցեր տվեք, որպեսզի նրան հարցնեն, օրինակ. Ի՞նչ քահանայություն եք դուք կրում: Ինչպե՞ս եք դուք ստացել այդ քահանայությունը: Ինչպե՞ս եք դուք որևէ մեկին հաստատում որպես Եկեղեցու անդամ: Ի՞նչ է նշանակում «ձեռնադրել»: Ի՞նչ է նշանակում «ստանալ Սուրբ Հոգին»: Ինչպե՞ս կարող է Սուրբ Հոգին օգնել մեզ: Խնդրեք երեխաներին կիսվել իրենց փորձով, թե ինչպես է Սուրբ Հոգին օգնել իրենց:

Խորհուրդ. *Երբ երեխաները կիսվում են ավետարանի մասին իրենց զգացողությամբ, դա հրավիրում է Հոգին: Օգնեք երեխաներին հասկանալ, որ իրենց խաղաղության և սիրո զգացողությունները գալիս են Սուրբ Հոգուց: 4-րդ շաբաթվա միացյալ ժամը պետք է կենտրոնանա երեխաների վրա, որոնք կիսվում են, թե ինչպես է Սուրբ Հոգին օգնել իրենց: Հավաստիացեք, որ դրան տրամադրող ակնածալից միջավայր եք ստեղծում:*

Հունիս

Սուրբ Հոգին վկայում է ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ

Երգ. «The Holy Ghost»
(*CS*, 105)

«Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ» (Մորոնի 10.5):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Շաբաթ 1. Սուրբ Հոգին Աստվածագլխի երրորդ անդամն է:

Ներկայացրեք վարդապետությունը *(հավատո հանգանակ մտապահելով).* Օգնեք երեխաներին մտապահել հավատո առաջին հանգանակը նրանց բաժանելով երեք խմբի: Առաջին խմբին խնդրեք ասել. «Մենք հավատում ենք Աստծուն՝ Հավերժական Հորը»: Երկրորդ խմբին խնդրեք ասել. «Եվ Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին»: Երրորդ խմբին խնդրեք ասել. «Եվ Սուրբ Հոգուն»: Կրկնեք դա, յուրաքանչյուր խմբին հանձնարարելով ասել մյուս մասերը: Դուք կարող եք խնդրել փոքրիկներին մատերով հաշվել յուրաքանչյուր արտահայտությունը: Բացատրեք, որ Երկնային Հայրը, Հիսուս Քրիստոսը և Սուրբ Հոգին Աստվածագլխի երեք անդամներն են: Ասեք երեխաներին, որ Սուրբ Հոգին հոգի է, առանց մարմնի և ոսկորների:

Օգնեք հասկանալ և կիրառել *(սուրբ գրություններ կարդալով և փորձառությամբ կիսվելով).* Խնդրեք երեխաներին բացել իրենց սուրբ գրությունները և միասին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 130.22: Խնդրեք նրանց լսել, թե ինչու Սուրբ Հոգին չունի մարմին:

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 8.2: Խնդրեք երեխաներին ցույց տալ իրենց գլուխը, երբ դուք կարդում եք «միտք», իրենց սիրտը, երբ կարդում եք «սիրտ»: Կիսվեք օրինակներով, թե ինչպես է Սուրբ Հոգին խոսել ձեր մտքում և սրտում (տես Գաղատացիս Ե.22): Կարող եք երեխաներին խնդրել կիսվել այն պահերով, երբ իրենք զգացել են Սուրբ Հոգու ազդեցությունը:

Օգնեք հասկանալ և կիրառել *(Սուրբ Հոգու դերերի մասին քննարկելով).* Երեխաներին բաժանեք հինգ խմբի: Յուրաքանչյուր խմբին տվեք հետևյալ սուրբ գրությունների հատվածներից մեկը, և թող նրանք պարզեն, թե ինչպես է Սուրբ Հոգին օգնում մեզ. Հովհաննես ԺԴ.26 (սփոփում և ուսուցանում է); 2 Նեփի 32.5 (ասում է, թե ինչ պետք է մենք անենք); Մոսիա 5.2 (փոխում է մեր սրտերը); Մորոնի 8.26 (մեզ լցնում է հույսով ու սիրով); Վարդապետություն և Ուխտեր 20.27 (վկայում է Քրիստոսի մասին): Թող յուրաքանչյուր խումբը մյուս երեխաներին պատմի, թե ինչ իրենք սովորեցին:

Խորհուրդ. *Կարևոր է, որ երեխաները ավետարանի ճշմարտությունները սովորեն սուրբ գրքերից: Օգնեք երեխաներին կենտրոնանալ և լսել, երբ սուրբ գրություններն եք կարդում: Նույնիսկ փոքր երեխաները կարող են լսել հատուկ բառեր, երբ սուրբ գրության հատված եք կարդում:*

Շաբաթ 2. Սուրբ Հոգին խոսում է մեղմ, ցածր ձայնով:

Ներկայացրեք վարդապետությունը *(լսել սովորելով).* Ցածր ձայնով ասեք. «Ով կարողանում է լսել իմ ձայնը, թող մատը դնի իր քթին: Ով կարողանում է լսել իմ ձայնը, թող ձեռքը դնի իր քթին»: Շարունակեք նույնը, նշելով մարմնի այլ մասեր, մինչև բոլոր երեխաները կլսեն ձեր ցածր ձայնը: Դուք կարող եք ավարտել խնդրելով նրանց ծալել իրենց ձեռքերը: Նշեք, որ թեպետ դուք ցածր էիք խոսում, երբ երեխաները ուշադիր էին, նրանք կարողանում էին լսել ձեր ձայնը և հնազանդվել ձեր հրահանգներին: Բացատրեք, որ Սուրբ Հոգին խոսում է մեզ հետ ցածր, հանգիստ կամ մեղմ ձայնով:

Օգնեք հասկանալ *(ֆիզիկական վարժություն կատարելով).* Կապեք մի երեխայի աչքերը և նրան տարեք սենյակի մի անկյուն: Ասեք այդ երեխային. «Եթե դու ինձ վստահում և լսում ես, ես քեզ կառաջնորդեմ դեպի քո նստատեղը»: Մեղմ ձայնով նրան ուղղություններ տվեք, որպեսզի ապահով իր տեղը վերադառնա: Հարցրեք. «Ինչպե՞ս է սա նման Սուրբ Հոգու մեզ առաջնորդելուն»: Ցույց տվեք, թե ինչպես կարող է Սուրբ Հոգին նման լինել Լիահոնային, պատմելով Նեփիի կոտրված աղեղի մասին պատմությունը (տես 1 Նեփի 16.18–32): Կարող եք օգտագործել այս ծրագրի այլ դասերում տրված վարժություններ (տես Մարտ, շաբաթ 3, կամ օգոստոս, շաբաթ 4): Բացատրեք, որ ինչպես Լիահոնան է ուղեկցել մարդկանց իրենց հավատի և ջանասիրության համաձայն, այնպես էլ Սուրբ Հոգին կուղեկցի մեզ մեր արդարակեցության համաձայն, երբ մենք լսենք Նրա ձայնը:

Շաբաթ 3. Սուրբ Հոգին կարող է առաջնորդել և պաշտպանել մեզ:

Օգնեք հասկանալ *(պատմություններ լսելով).* Հրավիրեք որոշ ծնող անդամների կիսվել պատմություններով, թե ինչպես է Սուրբ Հոգին առաջնորդում և պաշտպանում մեզ: Նրանք կարող են կիսվել անձնական փորձով կամ սուրբ գրություններից և Եկեղեցու պատմությունից վերցված մի պատմությամբ (օրինակ, տես *Teachings of Presidents of the Church: Wilford Woodruff* [2004], 46–47): Երեխաներին բաժանեք խմբերի և փոփոխեք կամ խմբերը, կամ էլ պատմություն պատմողներին, մինչև բոլոր երեխաները կլսեն բոլոր պատմությունները: Թող երեխաները կիսաձայն երգեն «The Holy Ghost» (*CS*, 105), մինչ նրանք փոխում են պատմություն պատմողներին:

Օգնեք հասկանալ և կիրառել *(գրատախտակի վարժություն).* Գրատախտակը բաժանեք երկու մասի: Մի սյունակի վերևում գրեք «Կարևոր որոշումներ», իսկ մյուսի վերևում գրեք «Հրավիրեք Սուրբ Հոգուն»: Խնդրեք երեխաներին լրացնել առաջին սյունակը թվարկելով կարևոր որոշումները, որ կկատարեն իրենց կյանքում: Ապա նրանց խնդրեք լրացնել երկրորդ սյունակը թվարկելով, թե ինչ պետք է անեն Սուրբ Հոգին իրենց կյանք հրավիրելու համար, որպեսզի օգնություն ստանան այդ որոշումները կատարելիս:

Կարևոր քննարկումներ	*Հրավիրեք Սուրբ Հոգին*
Եղեք ազնիվ	Աղոթեք
Մկրտվեք	Եկեք եկեղեցի
Միսիա ծառայեք	Կարդացեք սուրբ գրքերը

Օգտագործեք գրատախտակը

Գրատախտակն արդյունավետ ուսուցման գործիք է: Այն կարող եք օգտագործել երեխաներին ողջունելու, հարցեր տալու, վարդապետությունը ներկայացնելու, մտքեր գրելու համար և պատմություններ կամ արտահայտություններ մեկնաբանելիս (տես TNGC, *162–63):*



Խորհուրդ. *Հոգին հրավիրելու եղանակ է երեխաներին հնարավորություն տալ կիսվելու, թե ինչ կարող են անել ավետարանի ճշմարտություններով ապրելու համար: Մտածեք, ինչպես կարող եք նրանց հնարավորություններ տալ յուրաքանչյուր միացյալ ժամի դասին:*

Շաբաթ 4. Սուրբ Հոգու զորությամբ, մենք կարող ենք իմանալ ճշմարտությունը ամեն ինչի մասին:

Օգնեք հասկանալ և կիրառել *(խաղ խաղալով կամ փորձություններով կիսվելով).* Միասին կարդացեք Մորոնի 10.5 և վկայեք, որ սուրբ Հոգին կօգնի մեզ ճշմարտությունը իմանալ: Ասացեք երեխաներին, որ երբեմն նրանք կարող են ջերմ, խաղաղ զգացում ունենալ եկեղեցում, կամ բարի գործեր կատարելիս և սուրբ գրությունները կարդալիս: Բացատրեք, որ այդ խաղաղ զգացումը գալիս է Սուրբ Հոգուց, որի շնորհիվ նրանք իմանում են, որ այդ ամենը ճշմարիտ և ճիշտ է: Երեխաներին բաժանեք դասարանային խմբերի, և խնդրեք յուրաքանչյուր խմբին կատարել հետևյալ վարժություններից մեկը. (1) Խաղացեք խորանարդիկներով խաղը մանկական ձեռնարկից, *Սիա ձեր փոքրիկները* (տես էջեր 29, 31): (2) Կիսվեք փորձառություններով, թե ինչպես է Սուրբ Հոգին օգնել իրենց: (Սկզբում դուք կարող եք մի ուսուցչի խնդրել յուրաքանչյուր խմբի հետ կիսվել իր փորձառությամբ:)

Հարմարեցրեք դասերը

Դասերը հարմարեցրեք երեխաների տարիքին: Կարող եք մտքեր և վարժություններ օգտագործել Եկեղեցու հաստատված այլ նյութերից, ինչպիսիք են մանկական ձեռնարկը և Եկեղեցու ամսագրերը:

Հուլիս

Ես կարող եմ հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին

Երգեք. «Come, Follow Me»
(***Hymns*, no. 116**)

Հիսուսն ասել է. «Եկ հետևիր ինձ» (Ղուկաս ԺԸ.22):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Խորհուրդ. *Երեխաների Խմբում շարժումը երեխաներին միշտ ներգրավված և ուշադիր է պահում: Հարմարեցրեք վարժությունները ձեր Երեխաների Խմբի չափին: Օրինակ, մեծ Երեխաների Խմբում հնարավոր է կարիք լինի քայլել տեղում, քան քայլել նկարների մոտ շաբաթ 2-ում:*

Խորհուրդ. *Երեխաների սովորելն ավելի արդյունավետ կլինի, եթե ուսուցման տարբեր եղանակներ կիրառվեն: Օրինակ, շաբաթ 2-ում, երեխաներն են ներկայացնում վարդապետությունը, դիտում նկարներ և վարդապետության վերաբերյալ ֆիզիկական վարժություն կատարում:*

Շաբաթ 1. Հիսուս Քրիստոսը միշտ հնազանդվեց Երկնային Հորը:

Ներկայացրեք վարդապետությունը *(սուրբ գրություններ կարդալով).* Պատրաստեք հինգ թղթի կտոր, որոնցից յուրաքանչյուրի մի կողմի վրա գրելով հետևյալ բառերից մեկը, իսկ մյուս կողմի վրա սուրբ գրության համապատասխան հղումը. *Ոչ թե* (Մովսես 4.2); *իմ կամքը* (Ղուկաս ԻԲ.42); *այլ* (3 Նեփի 27.13); *քո կամքը* (Հովհաննես Զ.38); *անեմ* (Հովհաննես Դ.34): Երեխաներին բաժանեք հինգ խմբի, և յուրաքանչյուր խմբին տվեք մի թղթի կտորը: Բացատրեք, որ այս բոլոր սուրբ գրությունները միևնույն ուղերձն են հայտնում, թե ինչպես Հիսուս Քրիստոսն Իր կյանքն ապրեց: Խնդրեք ուսուցիչներին օգնել երեխաներին հասկանալ իրենց սուրբ գրության ուղերձը: Թող յուրաքանչյուր խումբը իր թերթիկը դնելով գրատախտակի վրա ներկայացնի, թե ինչ են իրենք սովորել: Նրանք խնդրեք ձեզ օգնել և ճիշտ կարգով դասավորել բառերը և ապա նախադասությունը միասին կարդացեք:

Օգնեք կիրառել *(թղթե շղթա պատրաստելով).* Թող երեխաներն առաջարկեն, թե ինչպես կարող են հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին Երկնային Հոր պատվիրաններին հնազանդվելով: Թող յուրաքանչյուր երեխա թղթի կտորի վրա գրի կամ նկարի մի միտք: Թղթի կտորները միացրեք շղթա պատրաստելով: Նշեք, որ ինչպես շղթան է մեծանում հնազանդության յուրաքանչյուր արարքով, այնպես էլ մեր հավատն է աճում, երբ ամեն անգամ մենք հնազանդվում ենք:

Ներկայացրեք Վարդապետություններ

Երբ դուք վարժություն եք կատարում, պարզորոշ ներկայացրեք ուսուցանվող վարդապետությունը: Դա օգնում է երեխաներին ավելի լավ հասկանալ և կիրառել այն:

Սեղմեք այստեղ բառաշերտերի համար:

Շաբաթ 2. Հիսուս Քրիստոսը ման եկավ բարիք գործելով:

Օգնեք հասկանալ *(նկարներ նայելով և քննարկելով).* Երեխաներին ցույց տվեք մի զույգ կաշվե սանդալներ (կամ նկար, որտեղ Հիսուսի հագին սանդալներ են): Բացատրեք, որ Հիսուսը այսպիսի կոշիկներ հագած ման եկավ բարիք անելով: Գրատախտակի վրա գրեք հետևյալը. «Նա ման եկավ բարի անելով, որովհետև Աստված նրա հետ էր» (տես Գործք Ժ.38): Խնդրեք երեխաներին ձեզ հետ կրկնել այս արտահայտությունը: Մենյակում շարեք հետևյալ իրադարձությունները ներկայացնող նկարներ. Հիսուսը օրհնում է երեխաներին (տես 3 Նեփի 17.21–24), Հիսուսը բժշկում է կույրին (տես Հովհաննես 9.1–17), Հիսուսը վերակենդանացնում է Հայրոսի մահացած դստերը (տես Մատթեոս Թ.18–19, 23–25), և Հիսուսը կերակրում է 5,000 հոգու (տես Հովհաննես Զ.5–14): Խնդրեք երեխաներին ձևացնել, որ սանդալներ են հագնում, և թող մոտենան մի նկարի: Մի քանի երեխաների խնդրեք նկարագրել, թե ինչ է Հիսուսն անում այդ նկարներում: Խնդրեք նրանց նախքան հաջորդ նկարին մոտենալը, կրկնել հետևյալ արտահայտությունը. «Նա ման եկավ բարի անելով, որովհետև Աստված նրա հետ էր»: Նույնը կրկնեք յուրաքանչյուր նկարի հետ:

Շաբաթ 3 և 4. Հիսուս Քրիստոսի օրինակն ուսուցանում է ինձ, ինչպես ապրել:

Օգնեք հասկանալ *(սուրբ գրություններ կարդալով և երգեր երգելով).* Գրատախտակի վրա գրեք երկու խառը ցուցակներ, մի ցուցակում գրեք սուրբ գրություններ, որտեղ Հիսուսը մեզ համար իրեն հետևելու օրինակ է ծառայում, իսկ մյուս ցուցակում գրեք այդ սուրբ գրությունների հետ կապված երգեր: Երեխաներին բաժանեք խմբերի: Յուրաքանչյուր խմբին տվեք ձեր թվարկած սուրբ գրությունների իրադարձություններից մեկը ներկայացնող նկար: Յուրաքանչյուր խմբին խնդրեք համապատասխանեցնել նկարը գրատախտակի վրա տրված սուրբ գրությանը և երգին: Թող խմբերը հերթով ցույց տան իրենց նկարները, բացատրեն, թե ինչ օրինակ է ցույց տալիս Հիսուսը, և մյուս երեխաներին ղեկավարեն երգը կատարելիս: Կարող եք օգտագործել հետևյալը.

- Պատանի Հիսուսը Տաճարում, Ղուկաս Բ.42–49, «Seek the Lord Early» (*CS,* 108)
- Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին, Մատթեոս Գ.13–17, «Baptism» (*CS,* 100–101)
- Ուրեմն գնացեք, Մատթեոս ԻԸ.19–20, «We'll Bring the World His Truth» (*CS,* 172–73)
- Հիսուսը բժշկում է Նեփիացիներին, 3 Նեփի 17.7–9, «I'll Walk with You» (*CS,* 140–41)

Վկայեք, որ Հիսուս Քրիստոսը միակ կատարյալ օրինակն է, որին մենք պետք է հետևենք:

Օգնեք հասկանալ *(սուրբ գրություն կարդալով).* Թղթից սրտիկ կտրեք և վրան գրեք *Սիրեք միմյանց:* Դրեք այն ձեր սուրբ գրության Հովհաննես ԺԳ.34 բաժնում: Մի երեխայի խնդրեք, որ ձեր սուրբ գրության մեջ սրտիկ փնտրի: Բացատրեք, որ այդ սուրբ գրության մեջ Հիսուսը սովորեցնում է, ինչպես է Նա ցանկանում, որ մենք վարվենք միմյանց հետ: Խնդրեք երեխաներին իրենց սուրբ գրություններում գտնել Հովհաննես ԺԳ.34 և միասին կարդացեք այն: Յուրաքանչյուր երեխայի կարող եք տալ թղթե սրտիկ, վրան սուրբ գրության հատվածը գրված, որը կարող են դնել իրենց սուրբ գրքի մեջ, և առաջարկեք նրանց այդ նույնը կրկնել իրենց ընտանիքում:



Օգնեք կիրառել *(երգելով և մտքեր փոխանակելով).* Խնդրեք երեխաներին մեկ կամ ավելի շրջաններ կազմել: (Եթե այդքան տարածք չկա, թող երեխաների մեկ շարքը կանգնի դեմքով դեպի մյուս շարքը:) Յուրաքանչյուր խմբին տվեք թել, որի ծայրերը միմյանց հետ կապված են, որի վրա կոճակ է անցկացված: Թող երեխաները կոճակը սահեցնեն թելի վրայով և երգեն «Սիրեք միմյանց» (*CS,* 136): Հանկարծակի դադարեցրեք երգը, և խնդրեք այն երեխային (կամ երեխաներին), ում ձեռքում է կոճակն այդ պահին, կիսվել, թե ինչպես կարող են միմյանց հանդեպ սեր ցուցաբերել: Ավարտեք մի քանի երեխաների հրավիրելով կիսվել այն պահերով, երբ մյուսներն են սեր ցուցաբերել իրենց հանդեպ:



Օգնություն երաժշտության ղեկավարին

Որպեսզի օգնեք երեխաներին սովորել «Come, Follow Me» (*Hymns,* no. 116), կատարեք հետևյալը.

- Խնդրեք երեխաներին կատարել նույնը, երբ դուք դիպչում եք ձեր քթին, թափահարում եք ձեր ձեռքերը, և ծալում ձեռքերը: Ասեք նրանց, որ մենք կարող ենք հետևել Հիսուսին կատարելով այն, ինչ Նա արեց: Թող նրանք երգը հնչելիս երգի ռիթմով մի ձեռքի երկու մատերով հարվածեն մյուս ձեռքի ափի մեջ:
- Պատրաստեք ոտնահետքեր, որոնց վրա գրված են երգի բառերը: Խնդրեք երեխաներին ձեր երգելու ժամանակ ոտնահետքերը տեղադրել գրատախտակի վրա և կրկնեն յուրաքանչյուր տողը: Այնպես դասավորեք ոտնահետքերը, որ դրանք տանեն դեպի Փրկչի նկարը:

«Եկ հետևիր ինձ»,
Փրկիչն ասաց:
Ուրեմն եկեք նրա
հետքերով գնանք,
Միայն կարող ենք
մեկ լինել
Աստծո
կողմից սիրված,
Միածին
Որդու հետ:

Սեղմեք այստեղ ոտնահետքերի համար:

Երաժշտության ղեկավարները կարող են ներգրավել երեխաներին երգի վարդապետությունը սովորելու մեջ, երբ երեխաները կապ են ստեղծում խոսքերի, երաժշտության և պատկերների մեջ: Հաջորդ շաբաթներին երեխաներըկարող են հանել ոտնահետքերը, երբ սովորած կլինեն երգը:

Օգոստոս

Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է, և Նա Հրաշքների Աստված է

Ձեր ընտրությամբ երգ երգեք *Children's Songbook*-ից:

«Քանզի ահա, ես եմ Աստված. և ես հրաշքների Աստված եմ. . . . և ես չեմ գործում մարդկանց զավակների մեջ, բացի դա լինի իրենց հավատքի համաձայն» (2 Նեփի 27.23):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Խորհուրդ. *Երեխաները սովորում են գործողություններ կատարելով: Խնդրեք երեխաներին պատմություն պատմել գործողություններ կատարելով: Նախքան պատմություն պատմելը, երեխաների հետ պարապեք ինչ գործողություններ պետք է կատարեն: Սա կօգնի, որ պատմությունը պատմելիս երեխաները լսեն և կենտրոնանան:*

Շաբաթ 1. Հիսուս Քրիստոսը հրաշքների Աստված է:

Ներկայացրեք վարդապետությունը *(կռահելու խաղ խաղալով).* Գրատախտակին ութ գծիկեր գծեք *հրաշքներ բառի յուրաքանչյուր տառի համար:* Երեխաներին խնդրեք կռահել բառը: Լրացրեք առաջին տառը և կրկին խնդրեք երեխաներին կռահել բառը: Երկրորդ տառը լրացրեք և խնդրեք երեխաներին կռահել բառը: Յուրաքանչյուր հաջորդ տառի համար կրկնեք նույնը, մինչև նրանք կկռահեն բառը: Երեխաներին ասեք, որ հրաշքն առանձնահատուկ իրադարձություն է, որը տեղի է ունենում Աստծո զորությամբ: Երեխաներին խմբերի բաժանեք: Յուրաքանչյուր խմբին տվեք հետևյալ բառաշերտերի խումբը. *հրաշքները, ցույց են տալիս, որ, Հիսուս Քրիստոսը, զորություն, ունի, երկրի, վրա:* Խնդրեք յուրաքանչյուր խմբին բառերը ճիշտ կարգով դասավորել: ***(Սեղմեք այստեղ բառաշերտերի համար:)***

Օգնեք հասկանալ *(սուրբ գրությունների պատմություններ լսելով).* Ձեր իսկ խոսքերով պատմեք փոթորիկը հանդարտեցնելու (Մարկոս Դ.36–39) և ձկնորսական ցանցերը ձկներով լցնելու Հիսուսի պատմությունները (Ղուկաս Ե.1–11): Խնդրեք երեխաներին կատարել գործողություններ, որոնք համապատասխանում են պատմության դրվագներին (օրինակ, նմանակելով քամուն և ջրի ալիքներին և դուրս քաշելով դատարկ և լիքը ցանցերը): Յուրաքանչյուր պատմության հետ վկայեք, թե ինչպես է երևում, որ Հիսուս Քրիստոսը զորություն ունի երկրի վրա: Թող երեխաները վկայեն, թե ինչպես են այդ հրաշքները օգնել մարդկանց կարիքի ժամանակ:

Շաբաթ 2. Հիսուս Քրիստոսը կարող է բժշկել հիվանդներին:

Օգնեք հասկանալ *(նկարներ նկարելով).* Երեխաներին խմբերի բաժանեք: Խնդրեք ուսուցչին յուրաքանչյուր խմբում սուրբ գրության մի պատմություն կարդալ կամ պատմել, որտեղ Հիսուսը բժշկում է ինչ-որ մեկին, օրինակ երկու կույրերին (Մատթեոս Թ.27–31), անդամալույծին (Հովհաննես Ե.1–9), տաս բորոտներին (Ղուկաս ԺԷ.12–19), կամ ազնվականի որդուն (Հովհաննես Դ.46–53): Թող երեխաները այդ պատմությունները ներկայացնող նկարներ նկարեն: Դուք կարող եք մի քանի երեխաների խնդրել Երեխաների Խմբին ներկայացնել իրենց նկարներն ու դրանց հետ կապված պատմությունները: Երբ նրանք պատմում են իրենց պատմությունը, առաջարկեք նրանց պատկերացնել, թե ինչպես էին իրենց զգում այն մարդիկ, որոնց Հիսուսը բժշկել էր: Խնդրեք երեխաներին վերցնել նկարներն իրենց հետ և ցույց տալ իրենց ընտանիքին տանը:

Փոքր խմբերով աշխատելը

Փոքր խմբերով աշխատելիս ավելի շատ երեխաներ կընդգրկվեն սովորելու գործընթացում: Միացյալ ժամին երեխաներն արդեն նստում են դասարանի խմբերով: Այդ խմբերը կարող են օգտագործվել փոքր խմբերով վարժությունների համար:

Շաբաթ 3. Հիսուս Քրիստոսը զորություն ունի մահվան վրա:

Օգնեք հասկանալ *(սուրբ գրությունների պատմություններ լսելով).* Ծխի մի քանի անդամների հրավիրեք Երեխաների Խումբ և խնդրեք հակիրճ պատմել հետևյալ պատմությունները, կարծես թե իրենք այդ իրադարձությունների ականատեսն են եղել. Ղազարոսին վերակենդանացնելը (Հովհաննես ԺԱ.1–45); Հայրոսի դստերը վերակենդանացնելը (Մարկոս Ե.21–24, 35–43); այրու որդուն վերակենդանացնելը (Ղուկաս Է.11–16); և Հարությունը (Հովհաննես Ի.1–18): Ծխի անդամները կարող են կրել պարզ հագուստներ, օրինակ գլխաշոր կամ խալաթ: Նրանց խրախուսեք վկայել, որ Հիսուս Քրիստոսը զորություն ունի մահվան վրա, և որ մեզանից յուրաքանչյուրը հարություն կառնի:

Շաբաթ 4. Հրաշքները գալիս են նրանց, ովքեր հավատում են:

Ներկայացրեք վարդապետությունը *(սուրբ գրություն կարդալով).* Գրատախտակին գրեք Վարդապետություն և Ուխտեր 63.9. «Բայց, ահա, հավատքը չի գալիս նշաններով, այլ նշաններն ուղեկցում են նրանց, ովքեր հավատում են»: Բացատրեք, որ այս սուրբ գրության մեջ *նշաններ* բառը կարող է նաև նշանակել *հրաշքներ:* Թող երեխաները կանգնեն և բարձրաձայն միասին կարդացեք այդ սուրբ գրության հատվածը: Նշեք *հավատ բառը:* Բացատրեք, որ հրաշքները միշտ չեն տեղի ունենում ապշեցուցիչ հանգամանքներում, և մենք նախ պետք է հավատք ունենանք, ապա կտեսնենք հրաշքներ մեր կյանքում: Նաև բացատրեք, որ չնայած հավատ ունենալուն մենք դեռևս տառապանք, ցավ և չարչարանք կկրենք, սակայն Աստված տեղյակ է մեր կարիքներից և հոգ կտանի մեզ համար:

Օգնեք հասկանալ *(սուրբ գրությունների պատմություններ լսելով).* Ձեր բառերով պատմեք Մովսեսի պատմությունը, որտեղ նա խնդրում է Փարավոնին, որ թողնի Աստծո ժողովրդին հեռանա Եգիպտոսից (Ելից Է–Ժ): Նախքան պատմությունը սկսելը, խնդրեք երեխաներին փորձել ձայներ հանել կամ շարժումներ կատարել, որոնք համընկնում են որոշ աղետների հետ: Օրինակ, երեխաները կարող են շարժել իրենց ձեռքերը և գետի ձայն հանել, քորել իրենց մարմինը ներկայացնելով մուն (ոջիլ), կովի ձայն հանել (մու), կամ տնքոց հանել թարախապալները ներկայացնելու համար: Թող երեխաները ուշադիր լսեն, երբ դուք պատմում եք պատմությունը: Նրանց ասեք, որ երբ դուք բարձրացնում եք ձեր ձեռքը, նրանք կարող են համապատասխան ձայն հանել կամ շարժում կատարել ներկայացնելով այն աղետը, որի մասին դուք պատմում եք, իսկ երբ դուք իջեցնում եք ձեր ձեռքը, նրանք լռում են: Ամեն անգամ յուրաքանչյուր աղետի մասին պատմելիս, ասեք երեխաներին, որ Փարավոնը միշտ հրաժարվում էր թողնել ժողովրդին: Փարավոնը շատ հրաշքներ և նշաններ տեսավ, սակայն նա չէր հավատում Աստծուն: Այս պատմությանը հակադրեք օրինակը, որտեղ հավատքով հրաշքներ են տեղի ունեցել (օրինակ, Եղիայի և Զարեփաթի այրու, Դանիելի և առյուծների, Հարեղի եղբոր, Նեփիի և Լեքիի): Եթե ժամանակը ներում է, թող երեխաները կատարեն շարժումներ, որոնք համապատասխանում են պատմությանը:

Օգնեք կիրառել *(հյուր խոսնակներ լսելով).* Ծխի մեկ կամ երկու ընտանիք հրավիրեք կիսվելու, թե ինչպես են հրաշքներն օրհնել իրենց, երբ նրանք հավատ են ունեցել Հիսուս Քրիստոսի հանդեպ: (Ընտանիքներին նախորոք խնդրեք այցելել Երեխաների Խումբ, որպեսզի նրանք ժամանակ ունենան պատրաստվելու:) Վկայեք, որ մեր հավատի շնորհիվ մենք հրաշքներ կտեսնենք մեր կյանքում:

Խորհուրդ. *Երբ երեխաները կիսվում են Երեխաների Խմբում իրենց սովորածով, ամրապնդվում է վարդապետության իրենց ընկալումն ու վկայությունը: Շաբաթ 2-ում նրանք խրախուսվում են կիսվել տանը իրենց սովորածով: Սա հնարավորություն կտա ավետարանի քննարկում անցկացնել տանը և կամրապնդի ընտանիքը:*

Օգնեք հասկանալ

Երբ երեխաները ձեռքերով կատարում են պատմությունները, նրանք կարողանում են ավելի լավ հիշել և հասկանալ դրանք:

Ես ինազանդվում եմ Հիսուս Քրիստոսին, որովհետև ես սիրում եմ Նրան

«Եթե ինձ սիրում եք, իմ պատվիրանքները պահեցեք» (Հովհաննես ԺԴ.15):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Խորհուրդ. *Սուրբ գրություններ մտապահելը կարող է օգնել երեխաներին ավետարանի վարդապետություններ սովորելիս: Սուրբ գրությունների խոսքերը կարող են որպես ափոփանք և առաջնորդություն ծառայել (տես* TNGC, *171): 1-ին շաբաթվա ընթացքում, երեք բաներ կօգնեն երեխաներին մտապահել սուրբ գրությունները. կրկնություն, կարճ արտահայտություններ և տեսողական նյութեր:*

Շաբաթ 1 և 2. Պատվիրանները պահելով ես սեր եմ ցուցաբերում Հիսուս Քրիստոսի հանդեպ:

Ներկայացրեք վարդապետությունը *(սուրբ գրություն մտապահելով).* Որպեսզի օգնեք երեխաներին մտապահել Հովհաննես ԺԴ.15, նկարեք սիրտ և Տաս Պատվիրանները պատկերող նկար: Երեխաներին երկու խմբի բաժանեք: Սրտի նկարը պահեք մի խմբի առաջ և թող նրանք կանգնեն ու ասեն. «Եթե ինձ սիրում եք»: Տաս պատվիրաններով նկարը պահեք մյուս խմբի առաջ և թող նրանք կանգնեն ու ասեն. «Իմ պատվիրանները պահեք»: Կրկնեք մի քանի անգամ: Նույն ձևով մեծ երեխաները կարող են սովորել Հովհաննես ԺԴ.21-ի առաջին մասը («Ով որ իմ պատվիրաններն ունի և դրանք պահում է, նա է ինձ սիրողը»):

Օգնեք հասկանալ *(ներկայացնելով պատվիրանները).* Թղթեր պատրաստեք և յուրաքանչյուրի վրա մեկ պատվիրան գրեք (օրինակ, կարդացեք սուրբ գրությունները, համեստ հագնվեք և Իմաստության Խոսքին հնազանդվեք): Թղթերը լցրեք տուփի մեջ և թող մի երեխա ընտրի մեկը և ցույց տա ինչպես կարելի է պահել այդ պատվիրանը: Թող մյուս երեխաները կռահեն, թե ինչ է նա ցույց տալիս: Երգեք «Keep the Commandments» (*CS*, 146–47): Կրկներգը երգելիս թող այդ երեխան ղեկավարի մյուս երեխաներին ցույց տալով, թե ինչպես կարող են պահել պատվիրանները: Մի քանի երեխաների հրավիրեք կիսվել, թե ինչպես պատվիրանները պահելը կօրհնի նրանց:

Օգնեք կիրառել *(սուրբ գրություններ կարդալով և քննարկելով).* Ցույց տվեք «Ավետարանի իմ չափանիշները» և երեխաների հետ վերանայեք այդ չափանիշները: Բացատրեք, որ այդ չափանիշներին հետևելը արտահայտում է մեր սերը Քրիստոսի հանդեպ: Հետևյալ սուրբ գրությունների հղումներից յուրաքանչյուրը գրեք առանձին թղթի վրա. Ելից Ի.7; Ելից Ի.8–10; Ելից Ի.12; Հովհաննես ԺԳ.34–35; Մոսիա 18.10; և Վարդապետություն և Ուխտեր 42.40–41: Երեխաներին բաժանեք խմբերի և յուրաքանչյուր խմբին տվեք սուրբ գրությունների մեկ հղում, որպեսզի միասին կարդան: Թող նրանք սուրբ գրությունը համապատասխանեցնեն ավետարանի մեկ չափանիշի հետ և քննարկեն, թե ինչպես կարող են ապրել այդ չափանիշով: Խնդրեք նրանց իրենց մտքերով կիսվել Երեխաների Խմբի մյուս երեխաների հետ:



Սեղմեք այստեղ նկարների համար:

Մտապահեք սուրբ գրություններ

Սուրբ գրություններն արտասանելիս ցուցադրական նյութեր դիտելը օգնում է երեխաներին մտապահել:

Շաբաթ 3. Հիսուս Քրիստոսի հանդեպ իմ սերն աճում է, երբ ես աղոթում եմ:

Օգնեք հասկանալ *(սուրբ գրություններ կարդալով և քննարկելով).* Երեխաներին փոքր խմբերի բաժանեք: Թող յուրաքանչյուր խումբը կարդա և քննարկի հետևյալ սուրբ գրությունները, փնտրելով այն, թե ինչ է Փրկիչը սովորեցնում աղոթքի մասին. 3 Նեփի 18.19–20; Վարդապետություն և Ուխտեր 19.28, 38; 88.63–64: Շեշտեք, որ Փրկիչը ուսուցանում է մեզ աղոթել Երկնային Հորը Իր անունով, և դա օգնում է մեզ ավելի մոտ զգալ Նրան:

Օգնեք հասկանալ *(նկար գունավորելով).* Յուրաքանչյուր երեխայի համար պատճենահանեք մանկական ձեռնարկի էջ 19-ի նկարը, *Սիա ձեր փոքրիկները*: Թող երեխաները գունավորեն նկարը և այն տանեն տուն և ցույց տան իրենց ընտանիքին:

Օգնեք հասկանալ և կիրառել *(աղոթք քննարկելով).* Երգ երգեք աղոթքի մասին *Children's Songbook,* օրինակ, «A Child's Prayer» (*CS,* 12–13) կամ «We Bow Our Heads» (*CS,* 25): Խոսեք երեխաների հետ այն մասին, թե ինչպես է Տիրոջ հանդեպ ձեր սերը աճում, երբ աղոթում եք: Գրատախտակի վրա չորս սյունակներով աղյուսակ գծեք: Առաջին սյունակի վերևում գրեք *Մեր Երկնային Հայր:* Երկրորդ սյունակի վերևում գրեք *Շնորհակալություն հայտնեք Նրան օրհնությունների համար:* Երրորդ սյունակի վերևում գրեք *Օրհնություններ խնդրեք Նրանից:* Վերջին սյունակի վերևում գրեք *Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:* Խնդրեք երեխաներին իրենց խմբում թվարկել մի քանի օրհնություններ, որոնց համար իրենք շնորհակալ են: Ապա խնդրեք յուրաքանչյուր խմբին մեկ օրհնություն ասել, որի համար իրենք շնորհակալ են, իսկ դուք լրացրեք այն 2-րդ սյունակում: Ապա խնդրեք երեխաներին իրենց խմբում քննարկել այն օրհնությունները, որոնք ցանկանում են խնդրել Երկնային Հորը, և գրեք նրանց պատասխանները 3-րդ սյունակում: Վերանայեք աղոթքի մասերը:

Նկար գունավորել

Ոչ բոլոր երեխաներն են սիրում գունավորել: Ոմանք կարող են ընդամենը մի փոքր գունավորել: Գունավորելու նպատակն է, որ երեխաները դասի մասին տեսողական պատկերացում կազմեն, որը կարող են պահել և տանել տուն:

Խորհուրդ. *Ձեր միացյալ ժամերն այնպես ծրագրեք, որ ներգրավեք և մեծ և փոքր երեխաներին: Օրինակ, 3-րդ շաբաթվա առաջին վարժությունն ավելի լավ է կատարել մեծ երեխաների հետ, իսկ երկրորդ վարժությունը փոքր երեխաների հետ:*

Շաբաթ 4. Հիսուս Քրիստոսի հանդեպ իմ սերն աճում է, երբ ես ուսումնասիրում եմ սուրբ գրությունները:

Օգնեք հասկանալ *(նկարներ նկարելով).* Պատմեք մարդկանց բժշկելու և օրհնելու Քրիստոսի մասին պատմությունը տրված 3 Նեփի 17.7, 9–12, 20–24 հատվածներում, կամ խնդրեք մեծ երեխաներին կարդալ այն սուրբ գրության մեջ: Թող երեխաները այդ պատմությունից մի դրվագ նկարեն: Վկայեք, թե ինչպես է Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր սերն աճել, երբ դուք կարդացել եք սուրբ գրությունները:

Օգնեք կիրառել *(երգ երգելով և սուրբ գրությունները քննարկելով).* Երգեք «Seek the Lord Early» (*CS,* 108): Երեխաներին ասեք, որ նրանք կարող են ավելին սովորել Հիսուս Քրիստոսի մասին սուրբ գրություններ կարդալով կամ լսելով: Ապա պատմեք Մարկոս Ժ.13–16-ի պատմությունը, որտեղ Հիսուսն օրհնում է երեխաներին: Ցույց տվեք նկարը, որտեղ Հիսուսն օրհնում է երեխաներին: Թող երեխաները պատկերացնեն, թե ինչպես կզգային իրենք, եթե այնտեղ լինեին: Մի քանի երեխաների հրավիրեք կիսվել իրենց մտքերով: Բացատրեք, որ նրանք կարող են Փրկչին մոտ զգալ՝ Նրա մասին կարդալով սուրբ գրություններում:

Խորհուրդ. *Երբ երեխաները կիսվում են, թե ինչպես կարող են կիրառել վարդապետությունը, դա հաստատվում է խոսքերն իրենց սրտում և հրավիրում է Հոգին: Վարդապետությունն ուսուցանելուց հետո, երեխաներին հնարավորություն տվեք կիսվել, թե ինչպես կարող են կիրառել այն իրենց կյանքում:*

Եկեղեցու առաքելությունն է հրավիրել բոլորին գալ Քրիստոսի մոտ

«Այո, եկեք դեպի Քրիստոսը և կատարելագործվեք նրանում» (Մորոնի 10.32):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Խորհուրդ. *Երեխաներն ավելի լավ կսովորեն և երկար կհիշեն, եթե դուք մտքերն ասեք նկարներ և տեսողական այլ նյութեր օգտագործելով (տես TNGC, 176, 182–83): Երեխաներն իրենք կարող են արդյունավետ ձևով ցուցադրել: Միսիոների նկար ցուցադրելու փոխարեն կարող եք լիաժամկետ միսիոների հրավիրել Երեխաների Խումբ կամ թող մի երեխա հագնվի միսիոների պես:*

Շաբաթ 1. Մարգարեին հետևելը կօգնի մեզ գալ Քրիստոսի մոտ:

Ներկայացրեք վարդապետությունը *(սուրբ գրություն կարդալով և նկարներ նայելով).* Թող երեխաները կանգնեն և բարձրաձայն միասին կարդան Վարդապետություն և Ուխտեր 1.38: Բացատրեք, որ մարգարեները Հիսուս Քրիստոսի ծառաներն են: Ցույց տվեք Փրկչի և ներկայիս մարգարեի նկարները, և ասեք երեխաներին, որ երբ մենք հետևում ենք մարգարեին, մենք հետևում ենք Հիսուս Քրիստոսին:

Օգնեք կիրառել *(երգ երգելով).* Երգեք «Follow the Prophet»-ի 9-րդ տունը (*CS*, 110–11): Երեխաներին բաժանեք խմբերի, և թող նրանք ընտրեն մեկ կամ երկու բան, որ սովորել են ապրող մարգարեներից և առաքյալներից գերագույն համաժողովի ժամանակ: Թող մի խումբը շարժումներով ցույց տա, թե ինչ են իրենք սովորել: Իսկ մյուս երեխաները թող կռահեն, թե ինչ են նրանք կատարում: Կրկնեք յուրաքանչյուր խմբի հետ, երգելով «Follow the Prophet» երգի կրկներգը այն ընթացքում, երբ մի խմբին մյուսն է հաջորդում:

Շաբաթ 2. Ավետարանով կիսվելը օգնում է մյուսներին գալ Քրիստոսի մոտ:

Ներկայացրեք վարդապետությունը *(սուրբ գրություն կարդալով).* Լիաժամկետ միսիոների նկար տեղադրեք գրատախտակի վրա: Երեխաներին ասեք, որ նրանք կարդալու են միսիոներական աշխատանքի վերաբերյալ սուրբ գրության մի քանի հատվածներ: Երեխաների կեսին հանձնարարեք կարդալ Մատթեոս ԻԸ.19–20, իսկ մյուս կեսին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 133.37: Նրանց խնդրեք պատմել, թե ինչ են սովորել միսիոներական աշխատանքի մասին սուրբ գրություններից, և քննարկեք դա Երեխաների Խմբի հետ: Խնդրեք երեխաներին, ովքեր ներկայումս միսիա ծառայող ընտանիքի անդամ ունեն, կիսվել միսիոներական աշխատանքի մասին իրենց զգացումներով:

Օգնեք հասկանալ և կիրառել *(միսիոներական աշխատանքի մասին քննարկելով).* Խնդրեք երեխաներին կանգնել և երգել «I Hope They Call Me on a Mission» (*CS*, 169): Ասեք երեխաներին, որ Երկնային Հայրը ցանկանում է, որ ավետարանը քարոզվի ամբողջ աշխարհում, և նրանք կարող են այժմ պատրաստվել միսիոներ դառնալուն: Տուփի մեջ լցրեք առարկաներ, որոնք երեխաներին կհիշեցնեն, թե ինչպես կարող են պատրաստվել միսիա ծառայելուն, օրինակ, սուրբ գրություններ, կիրակնօրյա կոշիկներ, տասանորդի թերթիկ և թղթե սրտիկ: Խնդրեք մի երեխայի մի առարկա ընտրել տուփից և կիսվել, թե ինչպես տվյալ առարկան օգտագործելով իրենք կարող են պատրաստվել միսիոներ լինելուն:

Սովորել կրկնելով

Երեխաները սովորում են կրկնելով և հանձնարարությամբ: Այստեղ երեխաները կրկնում են սուրբ գրությունը և հանձնարարություն ստանում բառերը ճիշտ հերթականությամբ տեղադրել:

Սեղմեք այստեղ բառաշերտերի համար:

Շաբաթ 3. Մենք կարող ենք Քրիստոսի մոտ գալ ապաշխարելով, երբ սխալ ենք կատարում:

Ներկայացրեք վարդապետությունը *(սուրբ գրություն կարդալով).* Գրատախտակի վրա ցույց տվեք Հիսուս Քրիստոսի նկարը: Օգնեք երեխաներին մտապահել հետևյալ խոսքերը. «Այո, եկեք դեպի Քրիստոսը և կատարելագործվեք նրանում» (Մորոնի 10.32): Այդ սուրբ գրության յուրաքանչյուր խոսք գրեք առանձին թղթի վրա: Այդ թղթի կտորները խառը շարեք գրատախտակի վրա: Խնդրեք երեխաներին գտնել այդ սուրբ գրությունը և ձեզ հետ միասին կարդալ այն: Խնդրեք մի երեխայի գտնել այդ սուրբ գրության առաջին բառը և դնել այն գրատախտակի վրա իր տեղում: Կրկին կարդացեք այդ սուրբ գրության հատվածը, և կանչեք մեկ այլ երեխայի գտնել հաջորդ բառը: Կրկնեք մինչև բոլոր բառերը իրենց ճիշտ տեղում կլինեն: Երեխաներին բացատրեք, որ գալ Քրիստոսի մոտ նշանակում է Նրա հանդեպ հավատ ունենալ, պահել Նրա պատվիրանները, ուխտեր կապել և սխալ կատարելու դեպքում ապաշխարել:

Օգնեք հասկանալ և կիրառել *(իրավիճակի ուսումնասիրություն քննարկելով).* Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ, մենք կարող ենք սխալ գործելու դեպքում ապաշխարել: Թղթից չորս հատ ոտնահետքեր կտրեք, և յուրաքանչյուր ոտնահետքի վրա գրեք ապաշխարության մասերից մեկը. (1) զղջալ, (2) ներողություն խնդրել, (3) սխալը շտկել, և (4) սխալը չկրկնել: Ոտնահետքերը դրեք հատակին այնպես, որ դրանք տանեն դեպի Հիսուս Քրիստոսի նկարը, և թող մի քանի երեխաներ քայլեն այդ ոտնահետքերով: Երեխաներին խմբերի բաժանեք և յուրաքանչյուր խմբին մի իրավիճակ հանձնարարեք, որը կլինի ինչ-որ բան, որի համար երեխան ապաշխարելու կարիք կունենա: Օրինակ, «Ինչ-որ մեկը չի լսում իր ծնողներին, շարունակում է գնդակ խաղալ տան մեջ և ինչ-որ բան է կոտրում»: Խնդրեք քննարկել, թե ինչպես իրենք պետք է կիրառեն ապաշխարության յուրաքանչյուր քայլը:

Սեղմեք այստեղ ոտնահետքերի համար:

Օգնեք կիրառել

Երեխաները սովորում են, երբ նրանք ցույց են տալիս, թե ինչպես կարող են կիրառել ավետարանի սկզբունքներն իրենց կյանքում:

Խորհուրդ. *Իրավիճակի ուսումնասիրությունները իրական կյանքի դեպքեր են, որոնք օգնում են երեխաներին մտածել այդ մասին և քննարկել, թե ինչ կարող են անել իրենք նման իրավիճակում (տես շաբաթ 3): Իրավիճակների ուսումնասիրությունները կարող են օգնել ցույց տալ, թե ինչպես պետք է կիրառել ավետարանի սկզբունքները (տես* TNGC, *161–62):*

Խորհուրդ. *«Եթե սիրենք նրանց, ում ուսուցանում ենք, նրանք [և մենք] դառնում ենք Հոգու հանդեպ ավելի ընկալունակ»* (TNGC, *31): Դուք կարող եք երեխաների հանդեպ ձեր սերն ավելացնել, եթե աղոթեք նրանցից յուրաքանչյուրի համար, ծանոթանաք նրանց հետաքրքրություններին և մտահոգություններին, նրանց անունով դիմեք և ուշադիր լսեք նրանց:*

Շաբաթ 4. Տաճարային աշխատանքն օգնում է ինձ ու իմ ընտանիքին գալ Քրիստոսի մոտ:

Օգնեք հասկանալ *(երգ երգելով).* Ուսուցանեք «I Love to See the Temple» (*CS*, 95) երգի երկրորդ տունը: Ցույց տվեք տաճարի նկար, որը ծածկված է թղթի ութ կտորներով: Յուրաքանչյուր թղթի կտորի վրա գրեք կամ նկարեք հետևյալը. սիրտ, բաց դուռ, *ուխտ* բառը, *հնազանդվել* բառը, *սուրբ վայր* բառերը, *կնքվել* բառը, երեխայի նկար, և ընտանիքի նկար: Երեխաներին ասեք, որ դրանք երգի համար հուշումներ են: Նրանց խնդրեք ուշադիր լսել, իսկ դուք երգեք երգի մի տողը: Հարցրեք, թե որ հուշումն է համապատասխանում այդ տողին, և խնդրեք մի երեխայի հանել թղթի այդ կտորը: Տվյալ տողը կրկին երգեք երեխաների հետ, և բացատրեք, թե ինչ է դա նշանակում: Դուք կարող եք խնդրել նրանց այդ տողի հետ կապված մի շարժում կատարել: Կրկնեք դա երգի յուրաքանչյուր տողի հետ: Երբ բացեք ամբողջ նկարը, երգն ամբողջությամբ երգեք համապատասխան շարժումների հետ միասին: Երեխաներին ասեք, որ նրանք կարող են այժմ պատրաստվել արժանի լինել ավելի մեծ տարիքում տաճար գնալուն, և այդ ընթացքում ավելի կմոտենան Հիսուս Քրիստոսին:



Սեղմեք այստեղ արվեստի նկարների համար:

Նոյեմբեր

Երբ մենք ծառայում ենք ուրիշներին, մենք ծառայում ենք Աստծուն

«Երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք» (Մոսիա 2.17):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Խորհուրդ. *Սուրբ գրությունների որոշ պատմություններ պետք է հարմարեցնել երեխաների տարիքին: Շաբաթ 1-ում Բարի Սամարացու պատմությունն ուսուցանելիս, շատ կարևոր է բացատրել, որ եթե անծանոթ մարդն օգնության կարիք ունի կամ օգնություն է խնդրում, երեխան պետք է նախ օգնի վստահելի չափահասին:*

Խորհուրդ. *Միացյալ ժամը կարող է հնարավորություններ տալ աջակցելու Հավատ Աստծո հանդեպ ծրագրին: Շաբաթ 1 և 2-ում ծառայության վարժությունն օգնում է իրագործել* Հավատ Աստծո հանդեպ *ուղեցույց գրքերի էջեր 8–9-ի նպատակները:*

Շաբաթ 1 և 2. Հիսուս Քրիստոսն ուսուցանեց մեզ, թե ինչպես պետք է ծառայել մյուսներին:

Օգնեք հասկանալ *(բեմականացմանը մասնակցելով).* Պատմեք երեխաներին, որ մի օր մի մարդ հարցրեց Հիսուսին. «Ո՞վ է իմ մերձավորը»: Հիսուսը պատասխանեց պատմելով մի պատմություն, որը սովորեցնում է մեզ ինչպես ծառայենք մյուսներին: Մի քանի երեխաների խնդրեք հագնել պարզ հագուստներ, որպեսզի ներկայացնեն բարի Սամարացին առակի կերպարներին. ճամփորդ, ավազակներ, քահանա, Ղևտացի, Սամարացի և իջևանատեր: Ձեր խոսքերով պատմեք այս պատմությունը (տես Ղուկաս Ժ.30–37) և ապա օգնեք երեխաներին բեմականացնել այն: Հարցրեք երեխաներին. «Ի՞նչ է այս պատմությունն ուսուցանում մեզ, թե ով է մեր մերձավորը: Ո՞ւմ պետք է մենք ծառայենք»: Նշեք, որ մեր մերձավորը կարող է լինել կարիքի մեջ գտնվող ցանկացած մարդ: Բացատրեք երեխաներին, որ նրանք կարող են միշտ ծառայել իրենց ընկերներին և ընտանիքի անդամներին, իսկ անծանոթներին նրանք պետք է ծառայեն միայն եթե ծնողի կամ մեկ այլ վստահելի չափահասի հետ են: Վկայեք, որ Հիսուս Քրիստոսը սիրում է բոլորին և ցանկանում է, որ մենք ծառայենք մյուսներին:

Օգնեք կիրառել *(ընտանիքին ծառայություն ծրագրելով).* Ասեք երեխաներին, որ Հիսուսը ցանկանում է, որ մենք ծառայենք ուրիշներին, ներառյալ մեր ընտանիքի անդամներին: Թղթից փոքր շրջանակներ կտրեք և յուրաքանչյուր երեխայի տվեք մի քանի շրջանակ: Թող նրանք յուրաքանչյուր շրջանակի վրա նկարեն ժպտացող դեմքեր՝ պատրաստելով «Ծառայության ժպիտներ»: Քաջալերեք երեխաներին հաջորդ շաբաթվա ընթացքում կատարել ծառայության փոքր գործեր իրենց ընտանիքի անդամների համար: Միասին մտքեր փոխանակեք, թե ինչ կարող են նրանք անել (օրինակ, գրել սիրալիր նամակ, հավաքել խաղալիքները կամ անկողինը հարդարել): Խնդրեք երեխաներին այն վայրում, որտեղ ծառայություն են կատարել, թողնել «Ծառայության ժպիտ»: Թող նրանք խնդրեն իրենց ընտանիքներին իրենց հետ միասին մասնակցել այդ ծառայությանը: Խրախուսեք երեխաներին պատրաստվել հաջորդ շաբաթ Երեխաների Խմբի հետ կիսվելու, թե ինչպես է իրենց ծառայությունն օգնել ժպիտ պարգևել իրենց ընտանիքներին:

Պատկերացնել սուրբ գրությունների պատմությունները

Հասարակ կոստյումներից պատրաստված կոստյումները կօգնեն երեխաներին պատկերացնել այս սուրբ գրության պատմությունը:

Օգնեք հասկանալ և կիրառել *(Ծառայության մասին զեկուցելով).* Խնդրեք երեխաներին իրենց խոսքերով վերապատմել բարի Սամարացու պատմությունը: Օգտագործեք անցյալ շաբաթ օգտագործած հագուստները օգնելով նրանց հիշել: Ապա երեխաներին հնարավորություն տվեք, որպեսզի պատմեն անցյալ շաբաթվա իրենց «Ծառայության ժպիտների» մասին: Դա կատարելու մի եղանակ է ձեր Երեխաների Խմբի յուրաքանչյուր դասարանի հետ պատրաստել անիվ, ինչպես պատկերված է այստեղ: Պտտեք անիվը և կանչեք դասարանի մեկ կամ երկու երեխաների, ում դիմաց կանգնել է այն, պատմել իրենց ծառայության մասին, և թե ինչպես է այն օգնել, որ իրենք և մյուսները երջանիկ զգան: Կրկնեք, եթե ժամանակը թույլ է տալիս:

Սեղմեք այստեղ արվեստի նկարների համար:

Վերանայեք Վարդապետությունը

Զվարճալի ձևերով վարդապետությունները վերանայելն օգնում է երեխաներին հիշել իրենց սովորածը:

Շաբաթ 3. Երբ ես ծառայում եմ իմ ընտանիքին, ես ծառայում եմ Աստծուն:

Ներկայացրեք վարդապետությունը *(սուրբ գրություն մտապահելով).* Գրատախտակի վրա գրեք «Երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք» (Մոսիա 2.17) և քննարկեք դրա իմաստը: Օգնեք երեխաներին մտապահել սուրբ գրության այս հատվածը, այն երկու մասի բաժանելով, և թող երեխաների կեսը կրկնեն առաջին մասը («Երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք»), իսկ մյուս կեսը կրկնեն երկրորդ մասը («Դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք»): Կրկնեք մի քանի անգամ:

Օգնեք հասկանալ *(երգ երգելով).* Երգեք «When We're Helping» (*CS,* 198), *ծառայել* բառը փոխարինելով *օգնել բառով:* Կրկնեք երգը *մայր* բառը փոխարինել ընտանիքի այլ անդամներով (օրինակ, հայր, եղբայր և քույր): Հրավիրեք երեխաներին մնջախաղով ներկայացնել մի ծառայություն, որ նրանք կարող են կատարել ընտանիքի այդ անդամի համար, մինչ երգում են: Հիշեցրեք երեխաներին, որ երբ մենք ծառայում ենք ուրիշներին, մենք ծառայում ենք Աստծուն:

Օգնեք կիրառել *(Ծառայության հնարավորությունների մասին քննարկելով).* Գրատախտակի վրա ժամացույց նկարեք: Երեխաներին խմբերի բաժանեք և յուրաքանչյուր խմբին հանձնարարեք օրվա տարբեր ժամեր: Ասեք երեխաներին, որ կարող են իրենց ընտանիքին ծառայել օրվա ցանկացած ժամանակ: Ասեք երեխաներին. «Տիկ-տակ, տիկ-տակ, ժամանակն է ծառայելու _____ ժամին»: Տվյալ ժամը հանձնարարված խմբին խնդրեք կանգնել և թող կիսվեն, թե ինչպես կարող են ծառայել իրենց ընտանիքին օրվա այդ ժամին: Կրկնեք մինչև բոլոր խմբերը կկիսվեն իրենց մտքերով:

Խորհուրդ. *Երեխաներին տարբեր եղանակներով ներգրավելը սովորելն ավելի հաճելի կդարձնի: Փորձեք տարբեր եղանակներ օգտագործելով բաժանել երեխաներին, օրինակ աղջիկների և տղաների, որոշակի գույներ հագած երեխաների, կամ երեխաների, ում ծննդյան օրերը տարվա առաջին և երկրորդ կեսին են:*

Շաբաթ 4. Երբ ես ծառայում եմ իմ մերձավորին, ես ծառայում եմ Աստծուն:

Օգնեք հասկանալ *(Ծառայության հնարավորությունների օրինակներ տեսնելով).* Թող Երեխաների Խմբի ղեկավարը մտնի սենյակ ճնշված տեսքով և ցույց տալով, որ ակնհայտորեն օգնության կարիք ունի: Օրինակ, նա կարող է ձեռքից թափել իրերը, փորձելով շատ առարկաներ տանել, կամ փորձելով հանգստացնել փոքր երեխային: Թող երեխաներն առաջարկեն, ինչպես կարող են օգտագործել իրենց «օգնող ձեռքերը», նրան օգնելու համար: Երեխաներին հիշեցրեք, որ բարի Սամարացու պատմության մեջ, Հիսուսն ուսուցանում է մեզ ծառայել մյուսներին: Ցույց տվեք օգնության կարիք ունեցող երեխաների նկարներ: Կարող եք Երեխաների ձեռնարկի նկարների հավաքածուներից նկարներ օգտագործել: Հրավիրեք երեխաներին կիսվել, թե ինչպես կարող են օգնել այս իրավիճակներում: Կրկնեք Մոսիա 2.17-ի առաջին մասը, և թող երեխաները կրկնեն երկրորդ մասը:

Օգնեք հասկանալ *(մերձավորների համար ծառայություն պլանավորելով).* Թող երեխաները իրենց ձեռքերը նկարեն թղթի վրա և իրենց «օգնող ձեռքեր»-ի վրա գրեն, թե ինչպես իրենց ընտանիքը կարող է ծառայել իրենց հարևաններին: Նրանց խրախուսեք իրենց ընտանիքի հետ այդ ծառայությունը մատուցել շաբաթվա ընթացքում: Այդ ձեռքերը փակցրեք տեղեկատու տախտակի կամ պատի վրա, որը երեխաներին կհիշեցնի, ինչպես կարող են իրենք ծառայել:

Օգնեք հասկանալ և կիրառել *(երգ երգելով).* Խնդրեք մի երեխայի գալ սենյակի կենտրոն և համեմատել իր ձեռքերը ձեր ձեռքերի հետ: Նշեք, որ նրա ձեռքերը ձեր ձեռքերից փոքր են: Տվեք օրինակ այսպիսի հարցեր. «Իմ մեծ ձեռքերը կարող են հավաքել խաղալիքները: Իսկ քո փոքր ձեռքերը կարո՞ղ են»: Թող բոլոր երեխաները մոտենան և համեմատեն իրենց ձեռքերը իրենց ուսուցչի ձեռքերի հետ: Նշեք, որ նրանց ձեռքերը, չնայած փոքր են, կարող են ծառայության շատ գործեր կատարել: Երգեք «I Have Two Little Hands» (*CS,* 272): Հրավիրեք երեխաներին երգելիս իրենց առջև պահել ձեռքերը: Երբ երեխաները երգելիս ասում են *ձեռքեր,* թող երկու ձեռքն էլ վեր բարձրացնեն, և ապա կրկին արագ ծալեն:

Դեկտեմբեր

Ես գիտեմ ապրում է Քավիչն իմ

«Եվ արդ, բազմաթիվ վկայություններից հետո, որ տրվել են նրա մասին, սա է վկայությունը, ամենավերջինը, որ մենք տալիս ենք նրա մասին. Որ, նա ապրում է»: (ՎևՈ 76.22):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Խորհուրդ. *Երեխաները լավ են ընդունում ցուցադրական նյութերը: Մտածեք տարբեր ցուցադրական նյութեր օգտագործելու մասին, ներառյալ առարկաներ, գրատախտակի նկարներ, բառաշերտեր, կտորից գրատախտակներ և խաղատիկնիկներ* TNGC, *89–90):*

Շաբաթ 1. Հիսուս Քրիստոսը երկիր եկավ, ինչպես խոստացել էին մարգարեները:

Ներկայացրեք վարդապետությունը *(Ծննդյան օրերի մասին քննարկելով).* Հարցրեք երեխաներին. «Մտածեք այն ժամանակի մասին, երբ դուք հատուկ ձևով եք նշել ձեր ծնունդը: Ի՞նչ եք դուք արել»: Թող մի քանի երեխաներ պատմեն իրենց ծննդյան օրերի մասին: Բացատրեք, որ ի սկզբանե Երկնային Հայրն Իր մարգարեներին պատվիրել է պատմել աշխարհին աշխարհի պատմության մեջ ամենակարևոր ծննդյան՝ Իր Որդու, Հիսուս Քրիստոսի ծննդյան մասին: Բացատրեք, որ այդ ուղերձն այնքան կարևոր էր, որ մարգարեները պատրաստակամ էին իրենց կյանքը զոհել վկայելով, որ Քրիստոս է գալու: Թող երեխաները կրկնեն «Հիսուս Քրիստոսը եկավ երկիր, ինչպես խոստացվել էր մարգարեների կողմից» արտահայտությունը:

Օգնեք հասկանալ *(սուրբ գրության պատմություններ դերակատարելով).* Մի քանի մարգարեների նկարներ ցուցադրեք, որոնք ուսուցանել են, որ Հիսուս Քրիստոս է գալու: Երեխաներին բաժանեք խմբերի և յուրաքանչյուր խմբին մի սուրբ գրության հատված տվեք, որը նկարագրում է տվյալ մարգարեի ուսմունքներից մեկի պատմությունը: Թող խմբերը հերթով դերերով ներկայացնեն այդ պատմությունները (տես *TNGC,* 165–66), իսկ մյուս երեխաներն ասեն, թե որ մարգարեին են նրանք ներկայացնում: Այդ մարգարեները կարող են լինել Բենիամին թագավորը (Մոսիա 2.1, 5–7; 3.5–8), Աբինադին (Մոսիա 12.1, 9; 15.1–2; 17.1, 8–10), և Սամուել Լամանացին (Հելաման 14.1–5; 16.1–2): Վկայեք, որ Հիսուս Քրիստոսը եկավ երկիր և Նրա մասին մարգարեություններն իրականացան:

Խորհուրդ. *Երեխաներն ավելի լավ կհիշեն իրենց սովորածը, եթե այն ուսուցանեն մյուսներին: Մտածեք, ինչպես կարող եք օգնել նրանց կատարել դա միացյալ ժամին կամ տանը:*

Շաբաթ 2. Հիսուս Քրիստոսն աշխարհի Փրկիչն է:

Օգնեք հասկանալ և կիրառել *(նկարների և առարկաների մասին քննարկելով).* Չորս տուփ բերեք նվերի պես փաթեթավորված: Յուրաքանչյուր տուփ պետք է պարունակի մի նկար կամ առարկա, որը կներկայացնի հետևյալ իրադարձությունները և մի թուղթ, որտեղ կբացատրվի տվյալ օրհնությունը կամ պարգևը.

- Իրադարձություն. Հիսուսի ծնունդը, պարգև. «Երկնային Հայրը տվեց Իր Միածին Որդուն, որ լինի մեր Փրկիչը»:
- Իրադարձություն. Լեռան քարոզը, պարգև. «Հիսուս Քրիստոսը ուսուցանեց մեզ, ինչպես արդարակյաց լինել»:
- Իրադարձություն. Հիսուսն աղոթեց Գեթսեմանում, պարգև. «Հիսուս Քրիստոսը մեզ համար հնարավոր դարձրեց մեղքից փրկվելը»:
- Իրադարձություն. Հարություն, պարգև. «Հիսուս Քրիստոսը մեզ համար հնարավոր դարձրեց հարություն առնելը»:

Թող յուրաքանչյուր տուփը տարբեր երեխաներ բացեն, և քննարկեք, թե ինչպես ենք մենք օրհնվում յուրաքանչյուր պարգևով:

Օգնեք կիրառել *(գրելով կամ նկարելով).* Քննարկեք, թե ինչպես կարող եք նվերներ տալ Փրկչին ուրիշներին ծառայելով և սեր ցուցաբերելով նրանց հանդեպ (տես Մատթեոս ԻԵ.40): Յուրաքանչյուր երեխայի մի թուղթ տվեք և խնդրեք նրանց գրել կամ նկարել մի նվեր, որ կարող են տալ Փրկչին: Ապա թող ծալեն թուղթը և դրսից զարդարեն նվերի պես:

Շաբաթ 3. Հիսուս Քրիստոսը մի օր կվերադառնա երկիր:

Օգնեք հասկանալ *(սուրբ գրություններ կարդալով և դերակատարելով).* Երեխաներին ասեք, որ նրանք պետք է մեծ նորություն հայտնեն, որ մի օր Հիսուս Քրիստոսը կվերադառնա երկիր: Ընտրեք երկու երեխաների, որոնք կլինեն հեռուստատեսային կամ թերթի լրագրողներ և յուրաքանչյուր դասարանին որոշ հարցեր կուղղեն: Յուրաքանչյուր դասարանին տվեք հետևյալ հարցերից, սուրբ գրությունների վկայակոչումներից մեկը կամ երկուսը և մի քանի բոպե պատրաստվելու համար. Որո՞նք են Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստի նշանները: (Ջոզեֆ Սմիթ—Մատթեոս 1.28–29), Ինչպե՞ս Նա կգա (Մատթեոս ԻԴ.29–31), Ե՞րբ Նա կգա (Մատթեոս ԻԴ.36, 42, 44), Ի՞նչ տեղի կունենա արդար մարդկանց հետ, երբ Նա գա (ՎԱՈ 88.96–97), Ինչպիսի՞ն կլինի կառավարությունը, երբ Նա գա (Հավատո Հանգանակ 1.10; ՎԱՈ 29.11; 45.58–59), Ինչպիսի՞ն կլինեն կենդանիները, երբ Նա գա: (Եսայիա ԺԱ.6–9; Ովսէ Բ.18): Թող լրագրողի դեր կատարող երկու երեխաները հերթով հարցեր ուղղեն խմբերին, և թող յուրաքանչյուր խումբը պատասխանի:

Օգնեք կիրառել *(քննարկելով և երգելով).* Երեխաների հետ քննարկեք, թե ինչպես կարող ենք պատրաստվել Հիսուսի գալստին: Շեշտեք, որ եթե մենք արդարակյաց լինենք, կարող ենք չվախենալ: Հրավիրեք նրանց, քննարկել սա տանը իրենց ծնողների հետ: Երգեք «When He Comes Again» (*CS,* 82–83):

Խորհուրդ. *Այնպես պլանավորեք ձեր միացյալ ժամը, որպեսզի ներգրավեք և մեծ և փոքր երեխաներին: Օրինակ, Շաբաթ 3-ի առաջին վարժությունը ավելի լավ կլինի օգտագործել մեծ երեխաների համար: Ծրագրեք այնպես, որ այն հարմարեցնեք ավելի փոքր երեխաների համար:*

Շաբաթ 4. Ես կարող եմ կրկին ապրել Հիսուս Քրիստոսի հետ:

Օգնեք հասկանալ *(ֆիզիկական վարժություն կատարելով).* Նախքան Երեխաների Խմբի դասը սկսելը, աթոռների տակ փակցրեք մի քանի կարևոր քայլերով թղթեր, յուրաքանչյուրի վրա գրված. մկրտություն, հաստատում, աղոթք, ընտանեկան երեկո, հաղորդություն ընդունել, եկեղեցի հաճախել և տաճարային ամուսնություն: Աշխարհի նկարը տեղադրեք սենյակի մի կողմում, իսկ Հիսուս Քրիստոսի նկարը սենյակի մյուս կողմում: Մի երեխայի խնդրեք ցատկի մի նկարից մյուսին: Բացատրեք, որ մենք պետք է որոշ քայլեր կատարենք Հիսուսի և Երկնային Հոր հետ կրկին ապրելու համար: Խնդրեք երեխաներին ստուգել, արդյոք իրենց աթոռի տակ կարևոր քայլ է փակցված: Խնդրեք նրանց, ովքեր ունեն այդ թղթե քայլերը, հերթով առաջ գան և ասեն, թե ինչպես իրենց թղթի վրա գրված քայլը կատարելով կմոտենան Քրիստոսին: Այդ կարևոր քայլով թուղթը տեղադրեք հատակին՝ այդ երկու նկարների միջև: Շարունակեք, մինչև այդ քայլերով ուղի պատրաստեք սենյակի մի ծայրից մյուսը: Մի երեխայի խնդրեք քայլել աշխարհի նկարից մինչև Փրկչի նկարը, միայն ոտքերը դնելով կարևոր քայլերի վրայով: Երեխաներին խրախուսեք միշտ անել այն, ինչ ճիշտ է, որպեսզի մնան ուղղու վրա, և վերադառնան ու կրկին ապրեն Հիսուս Քրիստոսի հետ:

Օգնեք կիրառել *(նկարելով և գունավորելով).* Խնդրեք երեխաներին իրենց ոտքերը նկարել առանձին թղթի վրա և յուրաքանչյուր ոտնահետքի վրա գրեն կամ նկարեն մի քայլ, որը անելով կարող են կրկին ապրել Հիսուս Քրիստոսի հետ: Թող դաշնակահարուհին ցածր նվագի «I Will Follow God's Plan» (*CS,* 164–65), մինչև երեխաները գունավորում են: Խրախուսեք երեխաներին իրենց նկարները տուն տանել և ցույց տալ իրենց ընտանիքին:

Սեղմեք այստեղ ոտնահետքերի համար:

Խորհուրդ. *Որպեսզի ցույց տաք, որ սիրում եք նրանց, ում ուսուցանում եք, անկեղծորեն գովաբանեք երեխայի կատարած հատուկ արարքի համար: Օրինակ, ընդհանուր գովասանքի խոսքերի փոխարեն, ինչպիսիք են «շատ լավ էր» կամ «շնորհակալություն», դուք կարող եք ասել. «Շնորհակալություն ձեր ընտանիքի մասին պատմելու համար»:*

Իմաստալից ֆիզիկական վարժություններ

Երեխաները սովորում են մասնակցելով իմաստալից վարժություններին: Այս վարժության ժամանակ երեխաները քայլեր են նշում, որոնք կարող են կատարել և ավելի մոտենալ Քրիստոսին: Մտածեք, թե ինչպես կարող եք որքան հնարավոր է շատ երեխաներ ներգրավել:

Ինչպե՞ս օգտագործել երաժշտությունը Երեխաների Խմբում

Երեխաների Խմբում երաժշտության նպատակը երեխաներին Հիսուս Քրիստոսի ավետարանը ուսուցանելն է: Մանկական երգերը ավետարանի ուսուցումն ավելի հաճելի են դարձնում, հրավիրում են Հոգին և ակնածալից ու սովորելուն տրամադրող մթնոլորտ են ստեղծում:

Խորհուրդ. *Երգեցողությունը կարող է օգնել երեխաներին հանդարտվել և պատրաստվել լսելուն և սովորելուն: Օրինակ, դուք կարող եք բարձրացնել ձեր ձեռքերը և ասել երեխաներին, որ երգելիս նայեն ձեր ձեռքերին: Ասացեք նրանց, որ երբ իջեցնում եք ձեր ձեռքերը, նրանք պետք է ավելի հանդարտ կամ ավելի դանդաղ երգեն: Շնորհակալություն հայտնեք նրանց ակնածանքի համար:*

Խորհուրդ. *Կարիք չկա երաժիշտ լինել կամ գեղեցիկ ձայն ունենալ, որպեսզի Երեխաների Խմբում երգեցողությունը հաճելի և իմաստալից դարձնեք:*

Նախերգանքն օգտագործեք ակնածալից մթնոլորտ ստեղծելու և Հոգին հրավիրելու համար:

Նախերգանքն ակնածալից մթնոլորտ է ստեղծում և օգնում երեխաներին պատրաստվել ավետարանը սովորելուն: Թող երաժշտություն հնչի, երբ երեխաները դասարան են մտնում:

Երեխաներին հրավիրեք մասնակցել նախերգանքային երաժշտությանը՝ խնդրելով նրանց երգել մինչ մյուսները Երեխաների սենյակ են մտնում: Օրինակ, դուք կարող եք առջևում պահել ձեր ձեռքը և ասել երեխաներին, երբ ձեր ձեռքը բաց է, նրանք պետք է հանգիստ երգեն, իսկ երբ ձեր ձեռքը փակ է, պետք է կիսաձայն երգեն մեղեդին:

Որպես նախերգանք նվագեք այն երգ, որը երեխաները սովորում են, դա կօգնի նրանց ծանոթանալ մեղեդուն: Ներկայացրեք երգը, և ապա կիսաձայն երգեք մեղեդին նրանց համար: Ապա խնդրեք նրանց կիսաձայն երգել մեղեդին ձեզ հետ:

Երգը կարող է երեխաներին ներգրավել Երեխաների Խումբ ուղղելու առաջին իսկ պահից:

Երաժշտությունն օգտագործեք ավետարանի սկզբունքներն ուսուցանելու համար

Օգնեք երեխաներին հասկանալ, որ նրանք սովորում են ոչ միայն երգ, այլև ավետարանի սկզբունք (տես *CS*, iii): Հարցեր տվեք կամ օգնեք նրանց կենտրոնանալ երգում ուսուցանվող սկզբունքին հասարակ վարժությունով, ինչպես օրինակ, հաշվել քանի անգամ են նրանք երգում որևէ բառ կամ արտահայտություն (տես Փետրվարի օգնություն երաժշտության ղեկավարին):

Երգելիս երեխաները վկայում են (տես Հունվար, շաբաթ 1): Երեխաներին հիշեցրեք, որ ուղիղ նստեն և լավ ձայնով երգեն: Գովացեք երեխաներին և շնորհակալություն հայտնեք նրանց, երբ լավ են երգում:

Տանը պարապեք

Երգն արդյունավետ ուսուցանելու համար դուք պետք է ինքներդ իմանաք երգը: Տանը պարապեք, որպեսզի երեխաներին սովորեցնելիս կարողանաք նայել նրանց, ոչ թե գրքին:

Ինչպե՞ս սովորեցնել երգը

Երբ կծրագրեք, թե ինչպես եք ուսուցանելու երգը, ինքներդ ձեզ տվեք հետևյալ հարցերը. Ինչպե՞ս կարող եմ գրավել երեխաների ուշադրությունը: Ի՞նչ հարցեր կարող եմ ես տալ օգնելու երեխաներին հասկանալ երգի ավետարանական պատգամը: Ի՞նչ վկայություն կարող եմ ես թողնել երեխաների հետ, որը կամրացնի նրանց: (See *CS*, 300.)

Երեխաների համար միշտ երգեք նոր երգի խոսքերը, ոչ թե պարզապես կարդացեք կամ անգիր ասեք: Սա օգնում է, որ երեխաները մեղեդին կապեն խոսքերին: Երեխաները երգ սովորում են կրկին ու կրկին լսելով և երգելով այն:

Նրանք երգը սովորելու համար կարդալու կարիք չունեն: Օրինակ, դուք կարող եք հրավիրել երեխաներին, որ կրկնեն ձեզ: Դիպչեք ձեր ականջին և ձեր երգելու ընթացքում թող երեխաները լսեն կարճ խոսք կամ մի տող: Ապա շարժումով հասկացրեք նրանց, թե երբ է այդ տողը երգելու իրենց հերթը: Երկու տող երգեք այդպես, և ապա կրկնեք դրանք, մինչև երեխաները անգիր կանեն այդ տողերը: Կրկնեք նույնը հաջորդ երկու տողերի համար (և ապա հաջորդ երկու տողերի և այլն), մինչև նրանք կսովորեն ամբողջ երգը:

Վերանայեք երգերը սովորելու և զվարճանալու համար

Երեխաներին ներգրավվեք վերանայելու համար երգեր ընտրելիս: Օրինակ, յուրաքանչյուր երեխայի տվեք թղթե սրտիկ, և խնդրեք նրանց դրա վրա գրել իրենց անունը և իրենց սիրելի մանկական երգը: Այդ սրտիկները լցրեք «Սրտի երգեր» պիտակով տուփի մեջ, և երեխաներին խնդրեք երգելու համար ընտրել մի քանիսը: Ասեք երեխաներին, որ Երեխաների Միության երգերը կարող են լինել հանգստության, առաջնորդության և ոգեշնչման աղբյուր, և որ մենք կարող ենք երգել դրանք գրեթե միշտ և ամենուր:

Օգտագործեք երաժշտությունը, որ ներգրավեք երեխաներին և համապատասխան շարժումներ կատարեք

Երգելիս շարժումներ կատարելը կարող է օգնել երեխաներին երգերն ավելի արագ սովորել: Դա կարող է նաև նրանց ուշադրությունը կենտրոնացնել: Համոզվեք, որ սուրբ երգերի հետ պատշաճ շարժումներ եք կատարում: Կարևոր բառերի կամ արտահայտությունների համար ձեռքի սովորական շարժումներ կարելի է կատարել գրեթե ցանկացած երգի համար (տես Հունվարի օգնություն երաժշտության ղեկավարին): Օրինակ, «I Feel My Savior's Love» (*CS*, 74–75) երգելիս, ասեք երեխաներին, որ ամեն անգամ, երբ նրանք երգում են *սեր* բառը, նրանք պետք է իրենց ձեռքերը դնեն սրտի վրա:

Կան մի քանի ուրախ երգեր *Children's Songbook*-ում: Ուրախ ժամանակ անցկացրեք նրանց հետ, և երեխաները ևս կուրախանան: Օրինակ.

- Երեխաների հետ երգեք «Head, Shoulders, Knees, and Toes» (*CS*, 275) երգը սովորական տեմպով, իսկ ապա նրանց խնդրեք ձեզ հետ միասին ավելի ու ավելի արագ երգել:
- Երգեք «I Hope They Call Me on a Mission» (*CS*, 169): Փոքր երեխաներին խնդրեք ձևացնել, որ ձի են վարում և տանում Մորմոնի Գիրքն այն մարդկանց, ովքեր հեռու են ապրում: (Նրանք կարող են նաև ձևացնել, որ թռչում են ինքնաթիռով կամ գնում գնացքով:)

Երգ սովորեցնելու իմ Ծրագիրը

Սովորել երգը՝ պարապել, պարապել, պարապել

Հարցրեք ինքներդ ձեզ.

1. Ինչպե՞ս կարող եմ գրավել երեխաների ուշադրությունը:
2. Ի՞նչ հարցեր կարող եմ տալ, որոնք կօգնեն երեխաներին հասկանալ երգի ավետարանական պատգամը:
3. Ի՞նչ վկայություն թողնեմ երեխաներին, որը կամրացնի նրանց:

Խորհուրդ. *Երաժշտության արդյունավետ օգտագործումը կհրավիրի Հոգին: Ավարտելով երգը, հիշեցրեք երեխաներին, որ երբ զգում են սեր ու խաղաղություն, Սուրբ Հոգին օգնում է նրանց հասկանալ ճշմարտությունը:*

Գիտեմ, սիրում է Փրկիչն ինձ

Խոսք և երաժշտություն՝
Թեմի Ջեպսոն Քրիմերի և Դերենա Բելի

Դասկառանքով ♩ = 120–132

1. Գե - ղա - տե - սիլ մի վայ - րում
2. Այ - ժըմ գե - ղե - ցիկ տեղ

mp

հա - վաք - վե - ցին Հի - սու - սի շուրջ մա - նուկ - նե - ը:
սո - վո - ռում եմ Ը - լոր ուս - մունք - ներն Հի - սու - սի:

Օրհ - նու - թյուն ստա - ցան, Նրա սե - ը զգա - ցին, Տե - սան Նրա ար - ցունք - նե
Մե - ծե - ը միշտ ինձ ա - ռաջ - նոր - դում են, Լույս են իմ ճա - նա - պար

mf

ը: Գի - տեմ ես, որ - քան Նա նը - ռանց էր սի - ռում,
հին: — Շը - ջա - պատ - ված իմ Փրկ - չի մեծ սի - ռով,

Սի - ռում է ինձ նույն - քան: Թե - և Նը - ա ծնկ - նե
Նը - ան կող - քիս եմ զգում: Ապ - ում եմ միշտ, Նը - ան

Copyright © 2002 by Tami Jeppson Creamer and Derena Bell. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս երգը կարող է բազմացվել միայն առանձին դեպքերում ոչ առևտրային նպատակներով եկեղեցում կամ տանն օգտագործելու համար: Այս ծանուցումը պետք է ներառվի յուրաքանչյուր օրինակի մեջ:


րին չեմ նըս - տում, Ի - րա - կան է ինձ հա - մար:
հե - տե - վե - լով — Դե - պի Հոր տունն եր - կըն - քում:
Ապ - րում է Նա: Կը - հե
տե - վեմ ես Նը - րան, Սիր - տըս կը
տամ Նը - րան: Գի - տեմ, սի - րում է Փըր - կիչն ինձ:
1.
mp
2.
Գի - տեմ, սի - րում է Փըր - կիչն ինձ:
p

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ

Հրատարակվել է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից

© 2008 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Printed in the USA. Անգլերենի հաստատումը. 5/07:

2010 Outline for Sharing Time and the Children's Sacrament Meeting Presentation -ի թարգմանությունը: Armenian. 04763 201

Նկարներ. Շապկի առաջին էջ. *Կատարյալ սեր,* Դել Փարսոնի, © Del Parson: Էջ 3. *Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին,* Հարրի Անդերսոնի, © IRI; *Քրիստոսը և Մորմոնի Գրքի երեխաները,* Դել Փարսոնի, © 1995 Del Parson; *Առաջին Տեսիլքը,* Գերի Քափ, © Gary Kapp—չբազմացնել: Էջ 9. *Սրտիս ցանկությունները,* Վոլթեր Ռեյնի, տրամադրել է Եկեղեցու Պատմության Թանգարանը: Էջ 14. *Հիսուսը բժշկում է կույրին,* Կառլ Հենրիխ Բլոխի, օգտագործվում է Ֆրեդերիսբորգի Ազգային Պատմության Թանգարանի թույլտվությամբ, Հիլրոդ, Դանիա: Էջ 15. *Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին,* Հարի Անդերսոնի, © IRI; *Ուրեմն գնացեք,* Հարի Անդերսոնի, © IRI: Էջ 17. *Հիսուսն օրհնում է Հայրոսի դստերը,* Գրեգ Կ. Օլսենի, © 1990: Կազմի վերջին էջը՝ *Նրա թևի տակ,* Ջեյ Բրայանթ Վարդի, © 2004 Jay Bryant Ward.

ARMENIAN
4 02047 63201 3
04763 201